

## Ի՞ՆՉ ԵՆ ԹԱՔՑՆՈՒՄ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՍԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԸ

Բաֆֆի Ջորջյան

Թուրքական բազմալեզու հրատարակությունների թվում տասնամյակներ շարունակ լրաց են ընծանավում աշխատություններ, որոնք, եմելով քաղաքական նկատառություններից, թաքցնում կամ նենապահություն են պատմական իրողությունները՝ մոլորդյան մեջ գցելով թե՛ սեփական ժողովրդին և թե՛ մարդկությանն ընդհանրապես:

Սակավ դեպքերում այդօրինակ հրատարակությունները ստանում են իրենց պատասխանները, բայց ավելի հաճախ մնում են անպատասխան, քանի որ դիտարկվում են որպես անհերետ աշխատություններ:

Սիենոյն ժամանակ, սակայն, բազմաքանակ նամանօրինակ հրատարակությունները ոչ մասնագետ մարդկանց շրջանակներում ունենում են որոշակի ազդեցություն:

Նման ազդեցություն են թողնում Արևմտյան Հայաստանում գտնվող հայկական հուշարձանների բուրքական ցուցանակները:

Ստորև ներկայացնում ենք Արևմտյան Հայաստանում տարբեր ժամանակներում լրացներված մի քանի պատմական հուշարձանների ցուցանակների բուրքական և կեղծված տեղեկությունները:

### Ա

Աղթամարի Սր. Խաչ եկեղեցու մոտակայքում տարբեր ժամանակներում լրացներվել են երեք տարբեր ցուցանակներ:

Ցուցանակ Ա (լուս.՝ Արմեն Հայնազարյանի, 1980-ական թթ.): Թուրքերենով և անգլերենով նշվել է.

Բնագիր. բուրքերեն.

Akdamar Kilisesi.

Kilise M.S. 915-921 yılları arasında inşa edilmiştir. Kilisenin duvarları rölyeflerle iç duvarları ise freskolarla süslenmiştir.

### AKDAMAR KİLİSESİ

KİLISE M.S. 915-921 YILLARI ARASINDA İNSA EDİLMİŞTİR. KİLİSENİN DUVARLARI RÖLYEFLERLE İÇ DUVARLARI İSE FRESKOLARLA SÜSLENMİŞTİR.

### AKDAMAR CHURCH

THE CHURCH WAS BUILT BETWEEN 915-921 A.D. THE EXTERIOR WALLS OF THE CHURCH ARE DECORATED WITH RELIEF AND THE INTERIOR WALLS WITH FRESCOES.

Բնագիր. անգլերեն.


Akdamar Church.

The church was built between 915-921 A.D. the exterior walls of the church are decorated with relief and interior walls with frescoes.

Թարգմ. Աքդամար եկեղեցի. Եկեղեցին կառուցվել է 915-921 թթ.: Եկեղեցու արտաքին որմերը զարդարված են բարձրաքանակներով, իսկ ներքին որմերը՝ որմնանկարներով:

Ցուցանակ Բ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2000 թ.).

Ցուցանակ Գ (լուս.՝ Սրբվեն Սիմի, 2004 թ.).



Ցուցանակ Բ-Գ

Երկու ցուցանակներն եւ ունեն նոյնանման բուրքանակություն: Տեղադրվել են Գյավաշի գավառապետարանի կողմից: Թուրքերենով և անգլերենով նշվել եւ.

Բնագիր. բուրքերեն.

Kilise 915-921 tarihleri arasında Ermeni Vaspurakan Hanedanından Kral I. Gagik denetiminde Mimar Keşî Manauel tarafından inşa edilmiştir. Kilise duvarlarının alt bölümündeki Hıristiyan dini ile ilgili konuları içeren kabartmalarla üst kısımlarındaki İslam Sanatı etkili kabartmalarla birlikte Hıristiyan ve İslâm resim programlarının en başarılı ve ilginç örneklerindenidir.

**GEVAS KAYMAKamlıĞı**

[www.gevas.gov.tr](http://www.gevas.gov.tr)

Ցուցանակ Ա

lari içeren kabartmalarla üst kısımlarındaki İslam sanatı etkili kabatmaların birlikte Hristiyan ve İslam resim programlarının en başarılı ve ilginç örneklerindendir.

Բնագիր. անգերեն.

Between 915 and 921 dates this church was built by the architech Kesis Manael controllet by the king I Gagik who is from the dynasty of Armanian Vaspurakan the reliefs that are connected with Christian's religion on the lower part of church walls and the reliefs that are connected with Islam's religion on the upper, part of it's walls have been existed lagether with on walls are succesfull and interesting sampleform Islam and Christian pictures programs.

Թարգմ. Եկեղեցին կառուցվել է 915-921 թթ. հայոց Վասպուրականի իշխանական տոհմից Գագիկ Ա քազավորի հսկողությամբ ճարտարապետ տեր Մանվելի կողմից: Եկեղեցու որմերի ներքին մասի՝ քրիստոնեական կրոնը ներկայացնող և վերնամասի խլամական արվեստի ազդեցությունը կրող քարձրաքանդակների միասնությունը քրիստոնեական և խլամական նկարչության արվեստի ամենահաջող և հետաքրքիր նմուշներից են:

Ծանոթ. Ցուցանակում նույնացվել են կղզու և եկեղեցու անունները, անտեսվել է եկեղեցու Սր. Խաչ անվանումը, իսկ կղզու անունը բուրքերենով իմաստալից դարձնելու նպատակով կոչվել է Արդամար (Akdamar), որը քարզմանարար նշանակում է Սահիսակ երան: Նկատենք, որ կղզու ժողովովական հայերեն պատմական անունը բուրքերենի վերածելու դեպքում պետք է լիներ Արդամար (Ahtamar)<sup>1</sup>:

Հին և նոր ցուցանակների միջև առկա են տարբերություններ: 1980-ականների ցուցանակում ոչ մի տեղեկություն չկա եկեղեցին կառուցող Վասպուրականի հայոց քազավոր Գագիկ Արծրունու (908-943) մասին, մինչդեռ գրեթե ամբողջությամբ փոխվել են 2000-2004 թթ. ցուցանակները, որտեղ այդ մասին ավելացվել է: Բ և Գ ցուցանակներում նշվել են նաև անհիմն տեղեկություններ եկեղեցու արտաքին որմերի քարձրադիր մասերում գտնվող պատկերաքանդակների վերաբերյալ՝ դրանք ներկայացնելով որպես խլամական արվեստի ազդեցությունը կրող քանդակներ: Իրականում արտաքին որմերին առկա քանդակների հորիզոնական 6 գոտիներն այլարանորեն փառարանում են արարական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատազրական պայքարը, քրիստոնեությունը, Արծրունյաց տոհմի մեծերին ու նրանց քաջազրությունները, ինչպես նաև ներկայացնում

<sup>1</sup> Ժողովրենում Խ տաղի փոխարեն գործածվում է Հ (Հ)-ն և ոչ թե (Կ)-ն, իսկ Թ տաղը նույնությամբ պահպանվում է, այսինքն՝ Տ և ոչ թե D:

հայ շինականի խաղաղ աշխատանքը, կենցաղը, դարերի խորքից եկող հավատալիքներն ու պատկերացումները<sup>2</sup>: Օրինակ, վերևի գոտում գտնվող խաղողի որբագալարը, որի շիվերի օղակներում պատկերված են աշխարհիկ կյանքի տեսարաններ՝ այգու մշակում, բերքահավաք, գինու պատրաստում, ինչպես ասվում է ցուցանակում, չեր կարող իշխանական ազդեցության կրողը լինել թե-



կուզ այն պարզ պատճառով, որ զինին արգելված էր իշխանական կրոննով: Հետևաբար ցուցանակի բովանդակության մեջ ավելացված իշխանական ազդեցության միտքը նպատակ է հետապնդում տարածաշրջանը ներկայացնել որպես ազգերի խառնարան:

## Բ

Անի քաղաքի Պարունի պալատի մուտքի մոտ 2004 թ. զետեղված էր հետևյալ ցուցանակը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ Դ):

Բնագիր. բուրքերեն.

Bismillahirrahmanirrahim ben Selçuklu Sultanı Alparslan Anı şehrini feth ettim (1064) ve yönetimine kendi hükümdarlığım altındaki Şeddatlıoğlu'larından Ebül Manuçer'i atadım.

Selçuklu sarayı Selçuk Türkleri tarafından XII. yüzyılında yaptırılmıştır.



Ցուցանակ Դ

<sup>2</sup> Հայկական տվյալներում հանրագիտարան (այսուհետև՝ ՀԱՀ, համապատասխան հասորի և էջի նշումներ), հ. 1, Երևան, 1974, էջ 254: Պատկերաքանդակների գոտիների մասին ուսումնաշիրույթունների մասին տես՝ Մնացականյան Ս., Արդամար, Երևան, 1983, էջ 45-144:

Բնագիր. անգլերեն.

Seljuk was built by Seljuk Turks in XII century.

Թարգմ. Ամենաներող և ամենաբարեխսիղ Աստծո անունով ես՝ սելջուկ սուլթան Ալփ-Արսլանս, 1064 թ. նվաճեցի Անի քաղաքը, նրա կառավարիչ նշանակեցի իմ Ենրակայության ներքո գտնվող Շեղդարլը օրովուներից Էրով Մանուչերին:

Սելջուկյան պալատը կառուցվել է 12-րդ դարում սելջուկ քուրքերի կողմից:

Ծանոթ. Թուրքերենով ցուցանակում նշվել է 1064 թ. Անի քաղաքը նվաճող սելջուկ սուլթանի արձանագրությունը՝ չճշտելով, թե որտեղ է գտնվում այդ արձանագրությունը, որը ոչ մի կապ չունի հուշարձանի հետ և նպատակ ունի մոլորեցնել այցելուներին: Իսկ ինչ վերաբերում է արձանագրության տեղեկությանը, ապա այն վսալ է, քանի որ Ալփ-Արսլանը 1065 թ. Անին հանձնում է Դվինի Շաղդայան ամիրա Արուլ-Ասվարին, որի մահից հետո՝ 1067 թ., Գանձակի Շաղդայան ամիրա Փարլունը թանկարժեք ընծաներով սելջուկ սուլթանից գնում է Անին և հանձնում փոքր եղբորը՝ Մանուչեհն<sup>3</sup> (Վերոհիշյալ Ալփ-Արսլանի արձանագրությունը անգերեն ցուցանակում չկա): Քացի սրանից՝ ցուցանակում Պարոնի պալատը ներկայացվել է իր սելջուկյան պալատ: Մակայն իրականությունն այլ է. Ն. Մասր և Հ. Օրբելին անվերապահորեն այն թվագրում են ԺԲ-ԺԳ դր.<sup>4</sup>: Պալատի դրան բացվածքի շրջապատի երեսապատումը կատարվել է աստղաձև քանդակազարդ քարերով (տես նկար 1-2):


1905 թ. Գագկաշեն եկեղեցուց ավելի հյուսիս պեղվել է մեկ այլ պալատ կամ մեծ տուն: Ըստ գտնված կարմիր, աստղաձև ու սև ոռմբաձև մեծաքանակ քարերի ուսումնասիրության՝ թ. Թորամանյանը կատարել է շրամուտքի վերակազմություն, որն ամբողջովին նման է Պարոնի պալատի շրամուտքին: Դա վկայում է այն մասին, որ այսօրինակ հորինվածքային լուծումը, ըստ երևույթին, ընդունված է եղել Անիի՝ ԺԲ-ԺԳ դարերի ճարտարապետության մեջ: Աստղաձև քարերից մեկի վրա պարզ կարդացվել է Մարգիս անունը<sup>5</sup>:

Ըստ տարբեր գիտնականների՝ ԺԲ-ԺԳ դարերում հայկական ճարտարապետության մեջ շատ ընդհանրացած մի ոճ էր արտաքին դրսերի ամրող ճակատներն աստղաձև խճանկարներով զարդարել և դրանցից յուրաքանչյուրը յուրատեսակ քանդակել: Կան դրների ճակատներ, որոնք աստղաձև, քազմանկյուն կամ քառակուսի հարյուրավոր քա-

<sup>3</sup> Հայ ժողովորի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ, համապատասխան հաստորի և էջի նշում), հ. 3, Երևան, 1976, էջ 478-479:

<sup>4</sup> Մանավանյան Ս., Անիի-պալատ-հյուրատները, «ՊԲՀ», № 4 (95), Երևան, 1981, էջ 76:

<sup>5</sup> Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 73-74:



Նկ. 1-2

թերից են կազմվել, իսկ այդ քարերից յուրաքանչյուրը նույր ու մաճրիկ քանդակներով է զարդարվել<sup>6</sup>: Հետևաբար Պարոնի պալատը ոչ մի կապ չունի սելջուկների հետ և կառուցվել է ավելի ուշ հավանաբար Զաքարյան իշխանների կողմից: Նոյս ժամանակաշրջանից համանան շքամուտքեր հանդիպում են նաև Սաղմոսավանքում, Նոր Վարագավանքում, Հառիճավանքում, իսկ Մշկավանքի զարդի շքամուտքն ամենաշատն է նմանվում Պարոնի պալատի դարպասին<sup>7</sup>:

## Չ

Խոշարի բերդի մուտքի մոտ լուսանկարվել է երկու տարբեր ցուցանակ:

Ցուցանակ Ե (լուս.՝ Արմեն Հախնազարյանի, 1980-ական թթ.): Քուրքերենով և անգլերենով նշվել է.


Բնագիր. բորբերեն:

Հօսաբ կալես.

Bu kale M.S. 1643 yılında Osmanlıllara bağlı olarak

<sup>6</sup> Թօրամանեան Թ., Անի քաղաք, թ.՝ ամրոց, «Ազգագրական Հանդիս», Թիֆլիս, 1912, № 2, գլուխ XXIII, էջ 21-22: Տես նաև Ազատյան III, Արմանական պորտալներ, Երևան, 1987, ս. 31-36. Վան Խաչատուր, Գոյնը Դ-ԺԹ դր. հայկական ճարտարապետության մեջ, Երևան, 2008, էջ 21:

<sup>7</sup> Վան Խաչատուր, նշվ. աշխ., լուսանկար № 168:



Ցուցանակ Ե

yaşıyan Mahmudilerin beyi Sarı Süleyman tarafından yaptırılmıştır. Kalede iki Cami, Üç Hamam ve bir zidan vardır.

Բնագիր. անգլերեն.

Hoşab Fortress.

This fortress was built in 1643 A.D. by Sarı Süleyman the chief of the Mahmudis who were living under ottoman dependence. There are two mosques, Three baths and a jail within the fortress.

Թաղամ. Խոշարի բերդ. այս բերդը կառուցվել է 1643 թ. Օսմանյան կայսրությանը ենթակա իշխան Մահմութի Սուլեյմանի կողմից: Սիջնարերդը հյուսիսից շրջապատված է արտաքին պարսպով: Այն բաղկացած է աշտարակներից և աշտարակները միմյանց կապող պատերից: Բերդում գտնվում են 2 մզկիր, 3 բաղնիք և 1 բանտ:

Ցուցանակ Զ. (լուս.՝ 2008 թ.). բուրբերենով և անգլերենով նշվել է.

Բնագիր. բուրբերեն.

Hoşab kalesi.

Kale Osmanlı devletine bağlı Mahmudi Süleyman bey tarafından 1643 yılında yaptırılmıştır. Kuzeyden dış kale surları ile çevrili olan kale burçlar beden duvarları ile içerisindeki seyir köşkü, harem, selamlık, zindan, firın, mescid ve sarnılıç gibi yapılardan oluşmaktadır.



Ցուցանակ Զ

Բնագիր. անգլերեն.

Hoşap Castle.

This castle was built in 1643 by Süleyman Mahmudi, who had been under the sovereignty of Ottoman ...mp.... The castel which is surrounded by the outer r... From the north, consists of castle tovers, walls withi... reception room, a dungeon, a small mosque and cis... tern.

Թաղամ. Խոշարի բերդ: Այս բերդը կառուցվել է 1643 թ. Օսմանյան կայսրությանը ենթակա իշխան Մահմութի Սուլեյմանի կողմից: Սիջնարերդը հյուսիսից շրջապատված է արտաքին պարսպով: Այն բաղկացած է աշտարակներից և աշտարակները միմյանց կապող պատերից: Բերդում գտնվում են հանգստյան պալատ, կանանց և տղամարդկանց հասուն հյուրատներ, բանտ, փուռ, իսլամական աղորատեղի, ջրամբար:

Ծանր. Երկու ցուցանակներում էլ<sup>8</sup> անտեսվել է բերդի տարածքում գտնվող հայկական երկու եկեղեցների գոյությունը: Դրանք 19-րդ դարի վերջին կիսավեր էին<sup>9</sup>:

Եկեղեցու ավերակները դեռևս գոյություն ունեին 20-րդ դարի սկզբին<sup>10</sup>:

Հայտնի է, որ միայն ԺԳ դարից հետո Խոշար անվանք (առաջին վկայությունը պատկանում է արար պատմիչ Յակոս Ալ-Համազլիին)<sup>11</sup> հիշվող (այսինքն՝ բարեհամ զուր) Մարդաստանն Արշակունյաց արքայական հարստության շրջանում հայոց Մարդաստունի ճախարարական տոհմի հայրենական կալվածքն էր: 9-11-րդ դարերում Մարդաստանը՝ որպես եախսկոպոսական առանձին թեմ, Վասպուրականի Արծրունյաց թագավորության կազմում էր:

Հստ բուրք պատմիչ Էվլիա Չելեբու վկայության՝ բերդը կառուցվել է Ալ-Աբբաս Հեքարու կողմից, իսկ իհջրի 800 (1397 թ.) անցել է Մահմութիների ձեռքը<sup>12</sup>:

ԺԷ դարում Խոշարը վերածվում է քուրդ Մահմութիների հիմնած իշխանության կենտրոնի<sup>13</sup>: Էվլիա Չելեբու՝ 1654 թ. բերդ այցելության ժամանակ

8 Թեպես երկրորդ ցուցանակում ավելի ընդարձակ է տրված, թե ինչ կառուցվեր կամ բերդում, սակայն հայկական եկեղեցների նաև ոչ մի խոսք:

9 Սիջնարերան Մ., Նկարագրական ուղևորություն հայաբնակ գաւառ Արևելեան Տաճկաստանի, Կ.Պոլիս, 1885, մասն Բ, էջ 124:

10 Կարսեղի, ճանապարհորդության թիրքաց Քիրովստանում, «Սուրճ», 1905, № 5, էջ 102:

11 Արարական աղյուրները Հայաստանի և հարեան երկրների մասին, հ. 3, Երևան, 1965, էջ 61:

12 Թուրքական աղյուրներ, Գ, Էվլիա Չելեբի, Երևան, 1967, էջ 259-260:

13 Ջարիք Չելեբի, Զիհան Նյումա, Թուրքական աղյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Երևան, 1964, էջ 38:

այն պատկանում էր Մահմուլիներին: Ըստ նրա՝ հիջրի 1060 (1650) թ. Սուլեյման Զեման անունով մի քարձը խան բերդն ընդարձակել էր<sup>14</sup>: 1830-ական-ներին Խոչարը դեռևս քորդ բեկերի նատավայրն էր. «...քերդարարաքին մէջ կը նստէր Ամին Պէկ անոն Քորդ պարոն..., որոյ տիրապետութիւնն քաւական տեղեր կընդարձակուէր և էր բոլորովին անկախ, նման իր քազմարին նախորդաց...»<sup>15</sup>:

1847 թ. օսմանցիները գրավում են բերդը և վերացնում քրդական իշխանությունը<sup>16</sup>:

Ցուցանակում ոչ միայն խոր չկա բերդի հայկական ծագման մասին, այլև սխալ է նշված կառուցման թվականը (ցուցանակում նշվածը կարող էր լինել միայն վերակառուցման թվականը):

## Դ

Կարսի բերդի մուտքի մոտ լուսանկարվել է երկու տարբեր ցուցանակ:

Ցուցանակ Ե (լուս.) Սամվել Կարապետյանի, 2004 թ.)



Ցուցանակ Է

Ցուցանակ Ը (լուս.) Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

Երկու ցուցանակներն ել աննշան տարբերությամբ ունեն միանման բովանդակություն, որոնց վրա բուրքերնենով և անգլերնենով արձանագրվել են.

Բնագիր. բուրքերն.

Kars kalesi.

Kars Kalesi 1153 (hicri 547) tarihinde Saltuklu Sultanı Melik İzzeddin Saltuk'un veziri Firuz Akay tarafından yaptırılmıştır. 1386 (hicri 786) tarihinde Mogol istilasından sonra tahrip edilen kale, 1579 (hicri 987) tarihinde III Murad'nın emriyle Serdar Lala Mustafa Paşa tarafından yeniden inşa edilmiştir.

14 Թուրքական աղբյուրներ, նշվ. աշխ., էջ 259-260:

15 Միքայութեան Մ., նշվ. աշխ., մասն թ, էջ 125:

16 ՀԱՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 72:

Բնագիր. անգլերն.

Kars castle.

Kars castle was build in the year of 1153 by Firuz Akay who was a minister. In the time of Melik Izzeddin Saltuk who was the Sultan of Saltuklu state. The castle which had been destroyed by the mogul invasion in 1386, was rebuilt by Lala Mustafa Pasha who was ordered by Murad the third in 1579.

Թարգմ. Կարսի բերդ: Բերդը կառուցվել է 1153 թ. (հիջրի 547) Սալտուկլու սուլթան Մելիք Իզզեդդինի Սալտուկի նախարար Ֆիրուզ Ակայի կողմից: 1386 թ. (հիջրի 786) բերդն ավերվել է մոնղոլական արշավանդների հետևանով: 1579 թ. (հիջրի 987) Վերստին կառուցվել է Մուրադ Երրորդի հրամանով Սերդար Լալա Մուստաֆա փաշայի կողմից:

Ցանոր. Ցուցանակում անտեսվել են բերդի պատմության կարևորագույն հատվածները, որոնք կապում են հայության հետ: Արդյունքում ընթերցողը



Ցուցանակ Ը

Տպակիրություն է ստանում, թե բերդում շինարարական աշխատանքներ են կատարվել միայն թուրքերի նախնիների կողմից: Նաև անհիմն է բերդի կառուցման թվականը (1153 թ.), որովհետև Կարսի բերդը հայկական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Թ դարում Կարուց բերդ, Ամուրն Կարուց, Ամրոց Կարուց և նման այլ անվանումներով: Բերդը հիշատակվում է հայ և օտար մատենագիրների կողմից (Ստեփանոս Տարոնեցի, Թովմա Արծրունի, Արիստակես Լաստիվերցի, Մատթեոս Ուհայեցի, Կոստանդին Ծիրանածին և այլք)<sup>17</sup>:

888 թ. Կարսի բերդը պատկանում էր Վանանի իշխան Սահակ Մշեհին և ենթակա էր հայոց քաղաքոր Աշոտ Ա Բագրատունուն, սակայն նոյն թվականին Մշեհին ապստամբում է քաղաքորի դեմ և պարտվում:

17 ՀԱՀ, նշվ. աշխ., էջ 342: Տե՛ս նաև Ա. Ե., Կարս բերդարար, «Արձագանք», Թիֆլիս, մարտ, 1890, № 3, էջ 10:



Նկար 3

929 թ. հայոց թագավոր Աբասը Կարսը դարձնում է թագավորանիստ և ամրացնում միջնաբերդի՝<sup>18</sup> թագավորելով մինչև կյանքի վերջը՝ 957 թ.<sup>19</sup>:

961 թ. Աշոտ Գ թագավորը Բագրատունիների արքունիքը Կարսից փոխադրում է Անի<sup>20</sup>, սակայն 963 թ. Աշոտ Գ թագավորի եղբայրը՝ հայոց սպարապետ Մուշեղը, իրեն հոչակում է Վանանդի թագավոր՝ Կարսը դարձնելով մայրաքաղաք<sup>21</sup>: Նա շարունակում է թագավորել Կարսում մինչև 984 թ.: Նրան հաջորդում է որդին՝ Աբասը,<sup>22</sup> թագավորելով 984-1028 թթ.<sup>23</sup>, ապա թոռը՝ Կարուց թագավոր Գագիկը՝ 1029-1064 թթ.: Վերջին 1064 թ. Կարսը հանձնում է բյուզանդացիներին<sup>24</sup>:

18 ՀԱՅ, ճշվ. աշխ., էջ 342:

19 Աճայշան Հ., Հայոց անձնանունների թառարան, հ. Ա. Երևան, 1942, էջ 3:

20 ՀԱՅ, հ. 1, էջ 407:

21 ՀԱՅ, հ. 5, էջ 342:

22 Աճայշան Հ., ճշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1946, էջ 462:

23 Աճայշան Հ., ճշվ. աշխ., հ. Ա, էջ 4:

24 Նոյն տեղում, էջ 435:

1071 թ. Կարսն անցնում է սելջուկ թուրքերին<sup>25</sup>: Սակայն դա երկար չի տևում: Այդ մասին են փաստում միջնաբերդի և բերդի պարիսպների վրա գտնվող հայերեն արձանագրությունները (նկ. 3): տեղեկացնելով, որ Կարսի հայ բնակիչները կանգնեցրել են պարսպի բուրգերը<sup>26</sup>: Վիմագրերի մի կարևոր մասը եղել է միջնաբերդի և քաղաքը երկողող շրջապարապի աշտարակներին, որոնց մեծ մասը ոչնչացվել է 1890-ական թվականներին: Բարերախտարար, որոշ մասը հրաշքով փրկվել է (նկ. 4), իսկ ոչնչացվածների գգալի մասը՝ ժամանակին վերծանվել: Օրինակ՝ բերդի հյուսիսարևելյան անկյան մեծ աշտարակից հաշված դեսպի հարավարևելյան անկյունը վեցերորդ աշտարակի վրա եղել է հետևյալ արձանագրությունը<sup>27</sup>:

25 ՀԱՅ, հ. 5, էջ 342:

26 Ա. Ե., Կարս բերդաքաղաքը, «Արձագանք», Թիֆլիս, մարտ, 1890, № 4, էջ 4:

27 Քաջթերմանի, Յիշողութիւններ, «Լումայ», 1903, № 4, էջ 132:



Նկար 4 (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2007 թ.)

**Ի ՈԼ Գ (1184) բվիս շինեցաւ բուրջն յիշատակ Խաչոսին Կամլիտատոյն. աստուած ողորմի նմա<sup>28</sup>:**

1186 թ. վրաց Թամար թագուհին հայ իշխաններ Զաքարյան եղբայրներից Զաքարեհին նշանակում է թագավորության գործերի ընդհանուր իրամանատար, իսկ կրտսեր եղբորը՝ Խվանեհին՝ պետության խնամակալ<sup>29</sup>, որոնք էլ, ըստ պատմիչ Վարդան Արենելցու և Ժամանակակից այլ պատմիչների, 1206 թ. պատագրում են Կարսի բերդը<sup>30</sup>: Նրանք վերակառուցում են բերդը և աշտարակները: Այդ մասին փաստել է բերդի պարիսպներին գտնված հայերեն արձանագրություններից հետևալը.

**Թվիս ՈՉԳ (1234) ի քազարութես ը՛Ռուսուղանա, յարապակութենն Ինամէի մեր Կարուց քրիստոնէրս շինեցաք զրջներս ի հայալ արդեանց մերոց<sup>31</sup>:**

1236 թ. Կարսը նվաճում են մոնղոլները: 1394 թ. Կարսը գրավում և ավերում է Լենկրեմուրը, իսկ 1579 թ. բերդը նորոգվում է բուրժերի կողմից<sup>32</sup>:


## Ե

Հովհի կամրջի ճախսափնյա խելի մոտ 2005 և 2008 թթ. լուսանկարվել են ցուցանակներ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ թ):

Բնագիր. բուրժերնեւ.

Չօբանդե կօրպէսü.

Կօրպէ Կարգա Պազար դաշտու արքունիքուն բնակութեան համար կամրջի ճախսափնյա խելի մոտ 2005 և 2008 թթ. լուսանկարվել են ցուցանակներ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, ցուցանակ թ):



Ցուցանակ թ

tarafından miladi 1297-1298 yıllar arasında yaptırılmıştır.

Boyu: 128 metre. Eni: 8.50 metre. Kemer göz adedi 7 (bir göz iptal edilmiştir). En büyük kemer açılığı: 13.00 metre. En yüksek noktası: 30.00 metre.

Բնագիր. անգերեն.

The Cobandede Arcbridge.

The arcbridge is located in conjunction with the Kargapazari mountains and the Aras river construction period of the bridge dates back to the times 1295-1304 during Ilhanli's period of the ruler Gazan Han's huge construction work took place at this period of time the bridge was built by the governor Emir Coban Salduz between 1297-1298. Length: 128 meters. Width: 8.50 meters. Number of segments: 7 (one segment was eliminated). Maximum arc width: 13.00 meters. Maximum height: 30.00 meters.

Թաղաք. Չորբանինի կամուրջ: Կամուրջը կառուցվել է Կարգա թագավար լեռների Արաս գետի հետ միացման վայրում: Կամուրջը կառուցվել է Խիան-լըների կառավարից Գազան Հանի (1295-1304 թթ.) շինարարական ծաղկուն ժամանակաշրջանում: Կառուցվել է Գազան Հանի նախարար Էմիր Չորբան Սալդուզի կողմից 1297-1298 թթ.: Երկ. 128 մ է, քարձո՞ 8,5 մ, բուրժների քանակը՝ 7 (մեկը ջնջվել է): Ամենամեծ բուրժի քացածքը 13 մ է, ամենաբարձր կետը՝ 30 մ:

<sup>28</sup> Օրբելի Ի., Избранные труды, Ереван, 1963, с. 470.

<sup>29</sup> Հարությունյան Վ., Աշուակարվել եղած աշխատավորությունները և աշխատավորությունները Հայաստանում, 1233-1237 թթ. պատմություն, Երևան, 2008:

<sup>30</sup> ՀՀ Պ. հ. 3, էջ 537:

<sup>31</sup> Սարգսյան Ն., Տեղագրություն ի Փոքր և Մեծ Հայու, Վենեսուելա, 1864, էջ 104:

<sup>32</sup> ՀՀ Պ. հ. 5, էջ 342-343:

Ծանոք. Կամրջի կառուցման տարեթիվը հայտնի չէ<sup>33</sup>: Սակայն Ե. Տևկանցը, երբ 1872 թ. եղել է մոտակա գյուղում, նշել է, որ կամրջի վրայից 1865 թ. Տիմերեսու վարդապետն ընդօրինակել է հայերեն արձանագրություն, որը վերաբերում էր 1160 թ. Վերաբարողությանը. «...ի Հայոց հաստատեալ կամուրջս նորոգեաց Սագիստրոս ընդ վանուց սուրբ Աստուածածնի և ընդ որեկին Դարունայ թիւ ԶՃԹ (1160)»<sup>34</sup>, որտեղ պարզ նշվում է, որ կամուրջը կառուցվել է հայերի կողմից և նորոգվել 1160 թ. Մագիստրոսի<sup>35</sup>, Սր. Աստվածածնի վաճրի<sup>36</sup> (Հասանդայայում) և Դարունը բերդի տերերի մասնակցությամբ: Վերոհիշյալ արձանագրությունը Զաքրերունին արարատառ երկու այլ արձանագրությունների հետ տեսել է. Ի դարավակզբին և նշել, որ արձանագրությունները գտնվում են կամրջի արևելյան ճակատի վրա՝ կամարներից վեր: Արարատառ երկու արձանագրությունները մնացել են ամբողջական, հայկականը, ընդհակառակը, կարծես դիտմամբ զնշված է մուրճի հարվածներով, որից պարզ կարելի է կարդալ «նորոգեաց» բառը<sup>37</sup>: Զաքրերունին

<sup>33</sup> «Արարատ», 1892, էջ 336: Տես նաև Միքայիլ Արքա, Աշխ., մասն Ա, Կ.Պօլիս, 1884, էջ 24: Ղանձանայան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 216:

<sup>34</sup> Երեմիա Տևկանց, Ծանապարհորդություն Բարձր Հայք և Հասպարական, 1872-1873 թթ., Երևան, 1991, էջ 58: Տես նաև Մատենադարան, թոր. 54, Վավելագիր 13-I, թ. 37-38:

<sup>35</sup> Գրիգոր Մագիստրոսը՝ որդին Հորում Վասակի, Պահլավոնյաց սովորից, կոչվում է նաև Գրիգոր-Մարցեն Պահլավոնի կամ Քջնեցի: Հոր մահից հետո, միաբանվելով ուրիշ նախարարների հետ 1043 թ. բազավորեցնում է Գագիկ Բ-ին, որը հետո քննամանում է նրա հետ: Նա թողնում է Այրարատը և բաշվում Տարոն: Ամին գրավումից հետո Տարոնի իշխանությունը հանձնանում է իր փեսա Թոռոնիկ Մամիկոնյանին և անցնում Միջագետք, որտեղ էլ ապրում է մինչև մահը՝ 1059 թ.: Նրա գերեզմանը գտնվում է Բասենի կամ Հասանդալայի վանքում (Ամայոս Հ, Աշխ., հ. Ա, էջ 549): Գրիգոր Միջագետքի կուսականը էր: Նրա կուսականության ահանձների մեջ էր մտնում, բացի Միջագետքից, նաև Վասպորականը, Տարոնը և Հայաստանի հարավարևմտյան այլ մարզերը (ՀԱՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 217), իսկ Սասունի Թոռոնիկաների իշխանությունը շարունակվում է մինչև ԺԲ դարի վերջերը: Պետական այս միավորը ԺԲ դարի կեսերին Մեծ Հայքի ամենաուժեղ և կայուն հայկական իշխանությունն էր: Սասունից բացի՝ նրանց ներական էր Տնիքերան մերձակայքով, իսկ հյուսիսային՝ Արածանիի ափերով (ՀԺՊ, հ. 3, էջ 484, 487):


<sup>36</sup> Ավանդության համաձայն՝ վանքը կառուցել է Գրիգոր Մագիստրոս ԺԱ դարում: Սա է վկայում տաճարի հին շինության արձանագրությունը. «Ես Մագիստրոս այս տաճար իհմնարկեցի. յանուն եռք վիրաց սրբություն Աստվածածնի՝ ի բուականության Հայոց ԷՇԻ (= 1271)» (Երեմիա Տևկանց, Աշխ., էջ 54-55): Այսուղի հարկավոր է նշել, որ Գրիգոր Մագիստրոսը մահացել է 1059 թ., իսկ ժառանգները հավանաբար շարունակել են կրել Մագիստրոսի կոչումը: Կամրջի արձանագրության 1160, վանիք 1271 թվականները կարելի եր ներկայումս ստուգել ավելի մասնագիտորներ ի շահ պատմության, սակայն արձանագրությունները ոչնչացվել են բուրքելի կողմից՝ գրկելով մեզ այլ հնարավորությունից:

<sup>37</sup> Քաջրերունի, Յիշողութիւններ, «Լուսայ», 1904, № 3, էջ 154-156:

մանրամասն զննել է կամուրջը, և զարմանալի չէ, որ ներկայիս արձանագրության տեղում չի տեսել ոչ մի արձանագրություն: Սրանից հետևում է, որ այն հետագայում է բերվել այստեղ (Ակ. 5), հավանաբար այն ժամանակ, երբ երեք արձանագրությունները տեղահանվել են, որոնցից հայերենը ոչնչացվել է:

Իսկ ինչ վերաբերում է յորերորդ թոփշքին, ուաքանդվել է 1854 թ. օսմանցիների կողմից. «...արգելու զանց քշնամեացն ի Կարին»<sup>38</sup>:

1872 թ. Ե. Տևկանցը տեղում թոփշքի անբարե-



Նկար 5

Խիդճ նորոգման ականատեսն էր. «...աչք ոչ թե կշինեին, այլ լեցնելով կարկատան կրնեին...»<sup>39</sup>: Հավանաբար այդ ժամանակ էլ վերանորոգողները քերել են մոտ 800 տարի անեղծ մնացած հայերեն արձանագրությունը, իսկ սրանց սերունդներն ավելի ուշ նախ ընդմիշտ ոչնչացրել են արձանագրությունը, ապա հուշարձանի ցուցանակում խեղաքյուրելով պատմությունը՝ նշել, թե իբր կամուրջը կառուցվել է 1297-1298 թթ.:

## Զ

Անի քաղաքի Կարուց (Կարսի) դրան մոտ 2004 թ. լուսանկարվել է երկու ցուցանակ (լուս.՝ Ս. Կարսապետյանի) բուրքերենով և անգլերենով (ցուցանակ Ժ-ԺԱ):

Բնագիր. բուրքերեն.

Ani Harabeleri.

<sup>38</sup> Ալիշան Ա, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 24:

<sup>39</sup> Երեմիա Տևկանց, Աշխ., էջ 57-58:



Ցուցանկ Ժ-ԺԱ

Ani şehrinde ilk yerleşme M.Ö. 5000-3000 yilla da Kalkolitik çağda başlar. M.Ö. 3000-2000 eski tunç devri yerleşmesi. M.Ö. 2000'de Demir çağında Hurri yerleşmesi. M.Ö. 900-700 yılları arasında Urartu devleti yerleşmesi. M.Ö. 650 yıllarında Kimmeri hakimiyeti. M.Ö. 626-149 Saka Türkleri (İskit) Hakimiyeti. M.Ö. 350-300 yıllarda şehir eski Öğuz Boyalarından Arsaklıların Kemer Sakanlı soyundan Karampart tarafından yeniden kurulmuştur. M.S. 430-646 yılları arasında Sasani hakimiyeti. M.S. 646 yılında Halife Hz. Ömer devrinde Ani ve çevresi Arapların eline geçmiştir. M.S. 732 yılında Bağratlı Beyliği egemenliğine geçmiştir. M.S. 966 yılında Bağratlı III Asot tarafından şehir surları yaptırılarak Ani krallık merkezi olmuştur. M.S. 1045 yılında şehir Bizanslıların eline geçmiştir. M.S. 1064 yılında Selçuk Sultanı Alparslan tarafından şehir alınarak Şeddat Oğulları Beyliğine verilmiştir. M.S. 1199 yılında Ani Gürcü Atabeylerin eline geçmiştir. M.S. 1226 yılında Harzemşah devletine tabi olmuştur. M.S. 1235 yılında Moğol istilasına uğrayarak şehir tahrif edilmiş ve sonra eyalet merkezi olmuştur. M.S. 1339-1344 yılları arasında İlhanlılar egemenliğine geçmiştir. M.S. 1406-1467 yılları arasında Karakoyunlu devleti hakimiyeti

altına geçmiştir. M.S. 1467-1516 Akkoyunlular devleti hakimiyeti. M.S. 1516-1534 yılları arasında Afşar Türkleri hakimiyeti. M.S. 1534 yılında Osmanlı İmparatorluğu topraklarına katılmıştır. M.S. 1878 yılında Ruslar tarafından istila ile 40 yıl anavatandan ayrı kalmıştır. M.S. 1921 yılında istiklal harbi sırasında Ruslardan geri alınmıştır.

Բնագիր. անգլերեն.

The History of Ani

The first settlement in Ani was begun in 4th millennium B.C. in Kalkolitic era. In 3000-1200 B.C. the ancient Bronz age. In the 2nd Millennium Hurris settled down Iron age. In 900-700 B.C. the state of Urartu settled down. In 650 B.C. sovereignty of Kimmer. In 626-149 B.C. sovereignty of Saka (Iskit) Turks. In B.C. 149 A.D. 430 sovereignty Arsaks. In 430-646 A.D. the sovereignty Sasani. In 646 it was taken possession of Arabs in period of Hz. Ömer the Caliph. In 732 it was obtained by Bagrats. In 966 Ramports of the city was built by Asot III. who from Bagrat then the city was used as the capital of kingdom. In 1045 it was obtained by Byzantionus. In 1064 the city was obtained by Alparslan who was the Sultan of Seljuks after words

it was given to the tribe of Şeddadoğulları. In 1199 it was obtained by Georgianus Atabey. In 1226 it was obtained by the state of Harzamşah. In 1235 it was demolished during the Mongol invasion. In 1339-1344 it was obtained by the state of İlhanlı. In 1406-1467 it was obtained by the of Karakoyunlu. In 1467-1516 the soverenigty of the state of Akkoyunlu. In 1516-1534 it was taken possess on of Afsar Turks. In 1534 it was added to the lands of Ottoman empire. In 1878 it was invaded by Russia for 40 years. In 1921 it was taken back from Russia During the war of independence.

#### Թարգմ. Անիի ավելակները:

Անի քաղաքում բնակությունը սկսվել է մ.թ.ա. 5000-3000 թթ.՝ Էնեոլիթյան դարաշրջանում:

Մ.թ.ա. 3000-2000 թթ. եղել է վաղրունգելարյան բնակավայր (անգերենում 2000 թվականի փոխարեն արձանագրվել է 1200 թ.):

Մ.թ.ա. 2000 թ. երկարէ դարում եղել է Խուրրիական բնակավայր:

Մ.թ.ա. 900-700 թթ. ուրարտական բնակավայր էր:

Մ.թ.ա. 650 թ. միացվել է Աքեմենյան տիրապետությանը:

Մ.թ.ա. 626-149 թթ. անցել է Սակա (Իսկիր) թուրքի տիրապետության տակ:

Մ.թ.ա. 350-300 թթ. քաղաքը վերատին կառուցվել է հին Օղուզի ցեղից սերված Արշակունիների Կամսարական ընտանիքից ծագող Քարամիքարքի կողմից (անգերենում այս գրության փոխարեն գրվել է միայն այսքանը. «մ.թ.ա. 149 թ. մինչև 430 թ. եղել է Արշակունիների տիրապետության ներքո»):

430-646 թթ. եղել է Սասանյան տիրապետության տակ:

646 թ. սրբազն Խալիֆե Օմերի օրոք Անին և շրջակայրն անցնում են արաբների տիրապետությանը:

732 թ. Անին անցնում է Բագրատունիների իշխանությանը:

966 թ. Աշոտ Գ Բագրատունու կողմից կառուցվում են քաղաքի պարիսաները, և Անին դառնում է քագավորության մայրաքաղաք:

1045 թ. քաղաքն անցնում է բյուզանդացիներին:

1064 թ. քաղաքը գրավում է սելջուկ սուլթան Ալփ-Արալանը և հանձնում Շեղմաթօղուլլուներին:

1199 թ. Անին անցնում է վրաց իշխաններին:

1226 թ. ներարկվում է Հարզեմշահ պետությանը:

1235 թ. մոնղոլական արշավանքների ընթացքում քաղաքը նվաճվում և ավերվում, ավելի ուշ վերածվում է նահանգի կենտրոնի:

1339-1344 թթ. անցնում է Իլխանլըներին:

1406-1467 թթ. անցնում է Կարակոյունլուների

պետության, իսկ 1467-1516 թթ.՝ Ակկոյունլուների պետության տիրապետության տակ:

1516-1534 թթ. անցնում է Աֆշար թուրքերին:

1534 թ. միացվում է Օսմանյան կայսրության տարածքներին:

1878 թ. ռուսների կողմից նվաճվելով՝ մայր հայրենիքից 40 տարի հեռացվում է:

1921 թ. անկախության պատերազմի ընթացքում վերադարձվում է ռուսներից:

Ծանոթ. Ցուցանակում առկա են բազմաթիվ ակնհայտ սխալներ, նաև միտումնավոր բացրդումներ և խեղաթյուրումներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

Ուրարտական պետության անկումից հետո տարածաշրջանում ստեղծվում է Արմինա (Հայք) հայկական քաղավորությունը, որը մեղերի (մարերի) քաղավոր Աստիագեսի (մ.թ.ա. 584-553 թթ.) ժամանակ հարկատու էր Սեղիային, իսկ մ.թ.ա. 550 թվականից՝ Աքեմենյան Պարսկաստանին: Մ.թ.ա. 520 թ. Դարեհ Ա Աքեմենյան քաղավորը վերջ է դնում Արմինա քաղավորությանը, և տարածաշրջանը մտնում է Աքեմենյան պետության կազմում մինչև մ.թ.ա. 330 թ.<sup>40</sup>: Հետևաբար ցուցանակում նշված Աքեմենյան պետության տարածաշրջանի նվաճման մ.թ.ա. 650 թվականը սխալ է, ինչը նպատակ է հետապնդում անտեսել հայկական Արմինա քաղավորության գոյության փաստը: Ինչ վերաբերում է Սակերին, մ.թ.ա. 529 թ. Սիհին Ասիայի տափաստաններում նրանց դեմ պատերազմում սպանվում է Աքեմենյան քաղավոր Կյուրոսը, սակայն Սակերին չի հաջողվում տիրանալ պետությանը, որովհետև Կյուրոսին հաջորդում է նրա որդին Կամբյուսը<sup>41</sup>: Հետևաբար ցուցանակում նշված Սակերի տիրապետության ժամանակաշրջանի (մ.թ.ա. 626-149 թթ.) նասին տեղեկությունը հնարովի է:

Մ.թ.ա. 330-202 թթ. տարածքն անցնում է նորակազմ Երվանդունիների հայկական անկախ քաղավորությանը<sup>42</sup>, որի մասին ակնարկ իսկ չկա ցուցանակում, իսկ մ.թ.ա. 202-189 թթ.<sup>43</sup> Սելեկյան իշխանությանը<sup>44</sup>:

Մ.թ.ա. 189 թ. մինչև մ.թ. 1 թ. գտնվում էր Արտաշեսյան հայկական քաղավորության կազմում<sup>44</sup>:

Արտաշեսյան քաղավորության անկումից հետո Սեծ Հայրում քաղաքական ազդեցության համար մրցակցում են Հռոմը և պարքեմերը<sup>45</sup>:

66 թ. պարքեմերի և Հռոմի կողմից ճանաչվում է Արշակունյաց հայկական քաղավորությունը, և Տրդատ Ա հուչակվում է հայոց քաղավոր, իսկ տարա-

40 ՀԺՊ, հ. 1, Երևան, 1971, էջ 435, 438-439, 444, 446, 504:

41 Նշվ. աշխ., էջ 444:

42 Նշվ. աշխ., էջ 501, 504, 508, 521:

43 Նշվ. աշխ., էջ 516, 521, 526:

44 ՀԱՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 140-141:

45 ՀԺՊ, հ. 1, էջ 703-743: Տե՛ս նաև ՀԱՀ, հ. 2, էջ 107:

ծաշրջանը մտնում է հայոց թագավորության կազմում<sup>46</sup> մինչև թագավորության անկումը 428 թ.<sup>47</sup>:

Հայկական թագավորության անկումից հետո Անին անցնում է նախ Սասանյաններին, ապա ընկնում արաբների տիրապետության տակ, որոնք էլ Անին և շրջակայքը շարունակում են ճանաչել որպես հայ Կամսարական իշխանների կալվածք: Ի դեպ, Կամսարական իշխանական տոհմն առանձնապես հայտնի է օտար նվաճողների՝ Սասանյանների և արաբների դեմ մղված ազատազրական պայքարով<sup>48</sup>:

Այստեղ կարևոր է նշել, որ քորքերեն ցուցանակում Արշակունիները և Կամսարականները ներկայացվել են որպես քորքական Օղուզ ցեղից սերված տոհմ, սակայն քորքերենի պետական տեսչության բառարանի տվյալներով՝ Օղուզ քորքական ցեղն առաջին անգամ հիշատակվում է 11-րդ դարում: Նրանք ապրել են Խորեզմում և միայն ավելի ուշ են գաղթել դեպի արևոտք: Սրանք համարվում են քորքմենների, ազերիների և գագավուզների նախահայրերը<sup>49</sup>, այսինքն՝ ցուցանակում առկա տեղեկության կեղծիքը բացահայտվում է հենց քորքերենի պետական տեսչության բառարանի տվյալներով:

Ինչ վերաբերում է Գ-Ը դր. Հայաստանի քաղաքական կյանքում նշանակալի դերակատարություն ունեցած Կամսարական նախարարական տոհմին, ապա սրանք սերվել են Պարքը Կարենյան իշխանական տոհմից, որոնց Գ-ի դարի կեսին կոտորել են պարսից Սասանյանները: Փրկված Կարենյաններից Պերզոնատի որդի Կամսարն ապաստան է գտնում Հայաստանում: Հայոց արքա Տրդատ Մեծը 321 թ.<sup>50</sup> Արանց է պարզեւում արքունապատկան Շիրակ և Երասխանձոր գավառները (հետագայում անվանվել է Արշակունիք): Որպես ժառանգական կալվածք, ինչպես նաև նրանց քարձրացնում է հայ ավագ նախարարների աստիճանը: Կամսարականները շուտով խնամիանում են Մամիկոնյանների և Արշակունիների հետ և 5 դար շարունակ հավատարմաբար ծառայում հայրենիքին և հայ ազգին<sup>51</sup>:

46 ՀԺՊ, հ. 1, էջ 760: Տե՛ս նաև ՀԱՀ, հ. 2, էջ 107-108:

47 ՀԺՊ, հ. 2, Երևան, 1984, էջ 125: Տե՛ս նաև ՀԱՀ, հ. 2, էջ 107-108:

48 ՀԱՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 215:

49 [www.tdk.gov.tr](http://www.tdk.gov.tr) Oğuz: XI. yüzyılda Harezm bölgesinde toplu olarak yaşayan ve daha sonra batılıya doğru göç ederek bugünkü Türkmen, Azeri, Gagavuz ve Türkiye Türklerinin asılınlı oluşturan büyük bir Türk boyu.

50 **Քամսարական Ա.**, Անիի անցեալն ու ներկան, «Քազմավեպ», սեպտեմբեր, 1923, էջ 263:

51 ՀԱՀ, հ. 5, էջ 215: Հայ նախարարական տոհմի Կամսարականների մասմ տես 5-րդ դարի պատմիներ Ղազար Փարսկու և Եղիշեն մոտ (**Ղազար Փարսկու**, Հայոց պատմություն քուղը Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982, էջ 100, 134, 148, 152, 154, 168, 176, 194, 198, 204, 244, 252, 260, 268, 294, 296, 300, 302, 304, 314, 316, 324, 326, 328, 336, 338, 340, 352, 358, 360, 362, 398, 452, 468, 496: **Եղիշեն**, Վարդանանց պատմությունը, Երևան, 1958, էջ 71, 91, 106, 171):

Անդրադառնալով Անիի հիմնադրման հարցին, ապա այն առաջին անգամ՝ որպես անմատույց ամրոց, հիշատակվում է Ե դարում (Եղիշեն և Ղազար Փարսկու) պատմիչների մոտ)<sup>52</sup>:

780 թ. Աշոտ Բագրատունի Սակերը (հայոց իշխան 790 թ.-ից) Կամսարականներից զնում է Արշարունիքը և Շիրակ գավառներն Անի ամրոցի հետ և միացնում իր կալվածքներին<sup>53</sup>: Ցուցանակում Անին Կամսարականներից զնած իշխան է շփորաբար հիշվում Աշոտ Մասկերի պապը՝ Աշոտ Բագրատունին (հայոց իշխան 732-748 թք.)<sup>54</sup>:

961 թ. Բագրատունիները հայոց թագավորության (885-1045 թք.) մայրաքաղաքը Կարսից փոխադրում են Անի:

964 թ. Աշոտ Գ Ողորմած թագավորը կառուցում է Աշոտաշեն հզոր պարհապնդները, իսկ 989 թ. Սմբատ Բ թագավորը՝ Անիի երկրորդ՝ Սմբատաշեն կոչվող պարհապնդ:

1045 թ. Անին անցնում է բյուզանդական կայսրությանը, իսկ 1064 թ.՝ սելջուկներին:

1072 թ. Անին Ալփ-Արսլանից զնում է Դվինի ամիրա Արպատուարը և տալիս իր որդուն՝ Մանուչեհն՝ հիմք դնելով Անիի Չաղդաղյան իշխանությանը<sup>55</sup>:

1123 թ. Անիի հայ բնակչությունն ապստամբում է Չաղդաղյանների դեմ և քաղաքը հանձնում վրաց Դավիթ Շինարար թագավորին: 1126 թ. Չաղդաղյանները նորից գրավում են Անին: 1161 թ. Վրաց թագավոր Գեորգ Գ-ի օրոք քաղաքը նվաճվում է վրաց թագավորության կողմից, սակայն 1165 թ. Չաղդաղյանները վերատին գրավում են քաղաքը: 1174 թ. Անին գրավում են վրաց գորքերը, սակայն ավելի ուշ նորից անցնում է Չաղդաղյաններին<sup>56</sup>: 1199 թ. հայ-վրացական միացյալ զորքերը վերջնականացնելու գրավում են Անին, որը դառնում է հայ Զաքարյան իշխանների կալվածքը<sup>57</sup>:

Իրականությանը չի համապատասխանում նաև 1226 թ. Անիի՝ Խորեզմի (Հարզեմշահ) պետության ենթակելը<sup>58</sup>:

52 **Եղիշեն**, էջ 64: Տե՛ս նաև **Ղազար Փարսկու**, էջ 293:

53 ՀԱՀ, հ. 1, էջ 487-488: Հմնու. **Տե՛պ-Արքահամեան Յ.**, Տեղագործին Անի քաղաքին, «Մասեաց աղասնի», 1862, էջ 270: Նոյնարկաց տես նաև նոյնի՝ Տեղագործին Անի քաղաքին, Թեղողսիա, 1867, էջ 8:

54 **Ամայան Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 181-182:

55 ՀԱՀ, հ. 1, էջ 407-408:

56 ՀԺՊ, հ. 2, էջ 525-528, 534:

57 ՀԺՊ, հ. 3, էջ 525-528, 534: Տե՛ս նաև ՀԱՀ, հ. 1, էջ 407-408: **Հարզեմշահ Վ.**, նշվ. աշխ., էջ 123, 124:

58 Խորեզմի (Հարզեմշահ) պետության թագամառանց Զալալեդինի Գառնիի մոտ 1225 թ. պատերազմում է հայ-վրացական զորքի դեմ, որի հրանձնատարն էր Խվանեն, վերջին պարտություն է կրում: Զալալեդինի իրսակները 1226 թ. գրավում են վրաց թագավորության մայրաքաղաքը Տփղիսը: Զալալեդինի բանակ վիրածում է գրավել տարածաշրջանի մնջ քաղաքները՝ Կարինը, Անին, Կարսը, Խլարը, Դվինը և այլն, սակայն նրան հաջողվում է գրավել միայն Դվինը: Անիից, Կարսից և այլ քաղաքներից հավաքված զորքն ապատագրում է Տփղիսը:

1236 մոնղոլները տիրում են քաղաքին, անեցի հայերի՝ 1249 թ. և 1260 թ. ապստամբություններն ապարդյուն են անցնում<sup>59</sup>:

Զաքարյանները մոնղոլական տիրապետության շրջանում շարունակում են իշխել Անյում<sup>60</sup>:

Իսկ ինչ վերաբերում է 1339-1344 թթ. Անյի Իլհանլըների պետության անցնելուն, ապա սա ևս սխալ է, որովհետև դա այդպես էր դեռևս 1256 թվականից<sup>61</sup>, իսկ 1339-1344 թթ. բնորոշող իրողությունը իշխանության գահին Հասան-Ըուչուկի բարձրանալն էր<sup>62</sup>:

1386-1387 թթ., 1395-1396 թթ. և 1400-1403 թթ. քաղաքը նվաճվում և ավերվում է Լենկեմուրի արշավանքների ժամանակ<sup>63</sup>:

1406-1467 թթ. Անյին անցնում է Կարակոյունլուների տիրապետությանը<sup>64</sup>, իսկ 1467 թ.՝ Ակկոյուն-

լյուներին, որոնց իշխանությունը շարունակվում է մինչև 1502 թ., երբ Սեֆյան պետությունը վերջ է տալիս Ակկոյունլուների պետությանը և տիրանում տարածքին<sup>65</sup>: Հետևաբար ցուցանակում նշված Ակկոյունլուների տիրապետության ժամանակաշրջանը՝ 1467-1516 թթ., սխալ է:

1502 թվականից հետո տարածքն անցնում է Սեֆյան պետությանը, ապա Օսմանյան կայսրությանը, իսկ հետո ուսական քաջակորությանը:

1918-1920 թթ. Անյին մտնում էր Հայաստանի առաջին Հանրապետության կազմում:

1920 թ. ուստի և բուրքերի միջև ստորագրված Կարսի անօրինական պայմանագրով Անյին անցնում է բուրքերին:

1228 թ. Պոռշ իշխանը քշնամուց մաքրում է Դմինը: Ապա Խարի Եմիրի, Խկոնայի և Էյորյան սովորանների, նաև Կիլիկիայի հայկական քաջավորության զորքերը տարբեր ճակատամարտերում ջախչախում են նրան: 1231 թ. Ամիրի մոտ պատերազմին նա սպանվում է (Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 131-132: Տե՛ս նաև ՀԺՊ, հ. 3, էջ 604-605):

59 ՀԱՀ, հ. 1, էջ 408:

60 Մոնղոլների փաստորեն ճանաչել էին նրանց ժառանգական իրավունքը: Մոնղոլական տիրապետության ժամանակ իրեն Ամիում և Շիրակում իշխողներ՝ իշխում են Զաքարեի որդի Շահնշահ Ա (մի. 1261 թ.), նրա որդիներն ու բոռները: Վերջիններից Ամիում իշխում են Շահնշահ Բ (մի. 1320 թ.), Վահրամը և Զազանը (Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 291-292): 1350 թ. Անյի արարեկ է իշխում հայ իշխան Շահնշահ Գ Զաքարյանը, որը նոյն տարում զրկվում է իր բոլոր տիրություններից (ՀԺՊ, հ. 4, Երևան, 1972, էջ 18):

61 1256 թ. մոնղոլ Սանգու խամբ եղայր Հուլավու խանը (1256-1265) հարձակվում է Իրամի վրա և հնազանդեցնում տեղի իշխաններին, որով սկիզբ է դնում Հուլավայան մոնղոլ-իրանական պետությանը: Այն լոշվում է նաև Իլխանություն անունով: Հուլավուին հաջորդում է Արարա խանը (1265-1282), ապա Վերջիններ Եղայր Թագուարը (1282-1284), որը Իլխաններից առաջինն էր, որ խանամուրյուն է ընդունում և կրչվում Ահմադ: Նրան մահապատճի է ենթարկում Արարայի որդի Արդունը (1284-1291) և տիրանում իշխանությանը, ապա նրան հաջորդում են Եղայրը՝ Թեղդաբուն խանը (1291-1295), Թայրումը, Ղազանը (1295-1304), Ուջեյրունը, Արու-Սայիդը: Վերջինն նաև հետո՝ 1335 թ., սկսվում է պետության քայլայման ժամանակաշրջանը, որը վերջնականապես վերանում է 1344 թ. (ՀԺՊ, հ. 3, էջ 628, 632, 634, 636-637, 640-641, 644):

62 ՀԺՊ, հ. 4, էջ 16-17:

63 Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 332, 334:

64 Կարա-Կոյունլուները բուրքեն վաշկատուն ուազմիկ ցեղախումը է: 14-րդ դ. տարածվել են Մեծ Հայքի կենտրոնական և հարավային նահանգներում, Ատրապատականում: 1378 թ. Կարա-Մոհամմադը Ալաշկերտում ստեղծել է իմքնություն ամիրայություն: Նրա որդին Կարա-Յուսուֆը իրեն է ենթարկել Հայաստանը և Ատրապատականը: Թոռը՝ Խորանդար, ծգտելվ ստեղծել կենտրոնացված պետություն, փորձել է ստանալ հայերի օժանդակությունը, իրեն հռչակել է «շահ-ի Արման» (քաղաքոր հայոց)՝ պետական և զինվորական բարձր պաշտոններ տալով հայ իշխաններին (ՀԱՀ հ. 5, էջ 298-299):

65 ՀԺՊ, հ. 4, էջ 56: Տե՛ս նաև ՀԱՀ, հ. 1, էջ 224:

## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### Աշոտ Հակոբյան

1915 թ.-ից ի վեր Արևմտյան Հայաստանում հայկական հուշարձանների ոչնչացմանը զուգընթաց՝ քուրքական իշխանությունները, քաղաքական նկատառումներից ելենով, վերջին տարիներին սկսել են վերականգնել մի շարք հայկական հուշարձաններ:


Վերականգնվում են աշխարհիկ կառույցներ՝ ամրոցներ, կամուրջներ, դղյակներ, իմանականում կատարվում են հնագիտական հուշարձաններ՝ պեղումներով ուղեկցվող ուսումնասիրություններ:

2005-2007 թթ. վերականգնվել է Աղրամարի Սր. Խաչ Եկեղեցին, 2007 թ.՝ նորոգվել Կարսի Առաքելոց Եկեղեցին:

Պեղումները կատարվում են բավականաչափ մաքուր և խնամքով, որից հետո հիմնականում կատարվում է ամրակայում: Ինչ վերաբերում է գտածոների ուսումնասիրությանը, ապա հրապարակած նյութերը հիմք են տալս նշելու, որ դրանք ներկայացնելու ժամանակ բացակայում է գիտական անաշխառությունը:

Դրական է, անշուշտ, որ վերականգնելով ապահովում են հուշարձանի երկարակեցությունը, սակայն հաճախ վերականգնողական կամ նորոգչական աշխատանքներն իրականացվում են առանց գիտական հիմնավորումների և ցածր որակով:

Դրատելի է, որ դրանք կատարվում են կրաշաղախով, բայց չտիրապետելով հայկական ավանդական սրբատաշ միոյն շարվածքի<sup>1</sup> շինարվեստին՝ ճիշտ չի իրականացվում քարերի շարումը (գծագիր Ա. ավանդական միոյն շարը):



<sup>1</sup> Հայկական միջնադարյան ճարտարապետության ավանդական միոյնի շարվածքում երեսապատի քարի արտաքին մակերեսը հարք ծալում ունի, իսկ հետնամասի ուռուցիկ անմշակ մակերեսն ապահովում է քարի և կրաշաղախի առավելագույն մակերեսով կայշորունակությունը, միացումը: Քարաշաղախ իրականացվում է միջյանց վրա սովորքի փոքր մակերեսի հպումով նստած, իսկ կարերի արանքներում՝ առանց շարականի գոյության: Այդպիսով կրաշաղախ միջուկը դառնում է պատի հիմնական զանգվածը:

Սինչդեռ քուրք վերականգնողները շարվածքը հիմնականում իրականացնում են ժամանակակից քարհանքերում կանոնավոր կտրված, ներսից և դրսից հարք մշակված քարերով (գծագիր Բ) կամ երբեմն քարի ներսի մակերեսի եզրերը փոքր-ինչ տաշելով՝ փորձում են նմանակել իին շարվածքին (գծագիր Գ): Վերջին երկու տարրերակները սովոր իին շարվածքի արտաքին նմանակումներն են, չունեն իին շարվածքին բնորոշ առավելությունները: Դրանք, ըստ Էռիքյան, պարզ երեսապատման տարրերակ են, քանի որ քարերը նվազագույն մակերեսով են միանում շաղախին և փոխանակ հենվելու շաղախին՝ ծանրանում են միմյանց վրա, որի պատճառով տարիների ընթացքում շաղախից պոկվում և քափվում են:

Ավերված մասերը նոր քարերով լրացնելիս սովորաբար չեն օգտագործում իին շարվածքին համահուն գոյնի և տեսակի քարեր, որը և չի համապատասխանում վերականգնման պահանջներին:

Երբեմն կատարվում են գիտականորեն չիմնավորված վերականգնումներ, օրինակ՝ Անիի պարիսպների աշտարակները, Պարտնի պալատը, Կարսի Առաքելոց Եկեղեցին: Ստորև ներկայացնում ենք պեղված և վերականգնված մի շարք հուշարձաններ:

**Ա. Հայկաբերդ (այժմ՝ Չավուշթեփե)։** գտնվում է Մեծ Հայքի Հայոց Չոր գավառի Աստվածաշեն (այժմ՝ Չավուշթեփե): Գյուղի արևելյան եզրին:

Պեղումների շնորհիվ հայտնաբերված սեպագիր ամենահին արձանագրության համաձայն՝ թերոր կառուցել է Ուրարտուի քաղաքոր Սարտոր Բ-Ա (Ք. ա. 764-735 թթ.): Սկսած 1961 թ.-ից՝ ամեն տարի Հայկաբերդում ընթանում են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքների մասին տպագրութել են մի շարք հոդվածներ և աշխատություններ<sup>2</sup>:

Պեղումների արդյունքում բացվել են միջնաբերդի պարիսպները, տաճարները, պալատական և օժանդակ կառույցները: Սակայն այստեղ ոչ մի ամրակայում (կոնսերվացում) չի կատարվել, որի պատճառով պատերի վերին շարքերը, երկար տարիներ մնալով բաց երկնքի տակ, գտնվում են շարունական քայլայման մեջ և մինչև իսկ ենթակա և հատկածական վլուգման:

<sup>2</sup> Օրինակ՝ American Journal of Archaeology («Ամերիկյան հնագիտական հանդես»): Anatolian Studies, Çavuştepe, Afif Erzen, Ankara, 1988 և այլն:

**Ք. Անձավի բերդ** գտնվում է Մեծ Հայքի Վան-Տևաս գավառում՝ Անձավ (այժմ՝ Յումակլը) գյուղի մոտ: Բերդում կատարվել են պեղումներ, որոնք դեռ շարունակվում են: Բացվել են արտաքին պարսպապատը, օժանդակ կառույցները: Պեղումների որակը գոհացուցիչ է:

**Գ. Անիի նորահայտ մատուռ-տապանատմեր**. 2004 թ. կատարված պեղումների ընթացքում Մայր տաճարի արևելյան որմին գրեթե կից բացվել է հյու-



ԱՆԻ. Մայր տաճարի արևելյան կողմում բացված մատուռ-տապանատմունը պեղումների պահին (2004 թ.) և գանձախուզության հետևանքով ավերվելուց հետո (2007 թ.)

սիս-հարավ ուղղությամբ ձգվող միմյանց կից մատուռ-տապանատմերի շարք, որոնցից մեկի ներսում կային հոգևորականների արձանագիր տապանաքարեր:

2007 թ. արդեն այդ տապանաքարերը տակնուրաքանչ էին արված, հանգույցյաների ոսկորները՝ հանված ու դրւությամբ: Գանձախուզության նպատակով տեղի ունեցած վանդալական գործողություններն ակնհայտորեն արդյունք են քաղաքատեղի-թանգարանի պահպանության համար պետության կողմից կարգված պահակների թողտվության կամ ուղղակի նրանց մասնակցության<sup>3</sup>:

<sup>3</sup> Քանի որ քաղաքատեղին ունի թանգարանի կարգավիճակ (մուտքը բույլատրվում է տոմսով մինչև երեկոյան ժամը 6-ը), ուստի ըստ երթարքի ավելացնելուն տեղի է ունեցել թանգարանի մեջ և մնացել անհետանք: Վատահ ենք, որ նման անտարբերություն չեր տիրի, եթե վնասը պատճառված լիներ Անիի եզակի մահմետական հուշարձանի՝ Մանուչեհ մինարեթին...

Քաղաքի տարածքում՝ գլխավոր փողոցին կից, պեղումներով բացված բնակարաններն ու օժանդակ կառույցներն ամրակայված են, որի շնորհիվ պահպանվում են հուշարձանները քայլայտմից, սակայն դրանք, հակառակ Բագրատունյաց շրջանի բնակելի և առևտրական նշանակության կառույցներ լինելուն, բոլորները ներկայացնում են որպես սեղուկյան:


**Դ. Անիի Պարոնի պալատ**. Վերականգնվել է ողջ պալատական համալիրը: Առանց գիտական հիմ-



ԱՆԻ. Պարոնի պալատի տեսքը հարավ-արևելքից նախքան վերականգնումը և «վերականգնումից» հետո

նավորման՝ շարվել-լրացվել են ավերված պատերը, որոնք բարձրացվել են գրեթե մի մակարդակի, որի արդյունքում նախնական տեսքից հիմնավոր շեղում է կատարվել:

Ներսում դրները վերականգնել են հնին անհամապատասխան, ավելի բարձր: Շքամուտքի գունավոր աստղածն շարվածքն իրականացվել է համաշափ կտրված քարերով, իսկ պալատի ներսում գտնվող դեկորատիվ կամարի վերնամասը՝ անհամաշափ քարերով: Շքամուտքի կամարը վերականգնվել է շեղումով, իսկ շքամուտքի ձախ ավերված պատը շարվել է ամբողջ բարձրությամբ, առանց բացվածքների: Զարթափ լանջի քաղակապ նկուղային հարլիկի արտաքին քանդված պատն ամրողությամբ շարվել է, որի մեջ առաջին հարկում բացվել են աստիճանական դասավորված, իսկ երկրորդ հարկում մի մակարդակի վրա հորինվել են փոքրիկ ուղղանկյուն լուսամուտների շարքեր: Այդ ճակատի եզրին բացվել է նեղ ու փոքրիկ դուռ: Այս ամենն իրականացվել է առանց գիտական հիմնա-




ԱՆԻ. Պարոնի պալատի տեսքը հարավից նախքան վերականգնումը և «վերականգնումից» հետո



որը շրջանակի մեջ առնված առյուծի պատկերաքանդակով զինանշանի հովանին էր (այլ խոսքով խաչը քաղաքի պահպանն էր), իսկ զինանշանի աջ և ձախ կողմերում 2-ական լուսամուտներ էին:


Նախքան նորոգությունը պահպանվել էին միայն առյուծի պատկերաքանդակը և շրջանակի



ԱՆԻ. զինանշանը և դարասկզբին և «վերականգնումից» հետո

վորումների և անհարազատ է միջնադարյան ճարտարապետությանը:

**Ե. Անիի պարիսպներ.** Վերականգնվել են քանդված հատվածներն առերևույթ կարծես հնին համահունչ, սակայն նկատելի են կոպիտ սխալներ: Այսպես, գլխավոր դարպասին (Ավագ դռանը) կից պարսպին զետեղված է Անիի խորհրդանշից-զինանշանը: Ըստ հայտնի հին լուսանկարների՝ այն ուներ հետևյալ պատկերը. սև և նարնջագույն տուփ քարերի գունային խաղող պատկերված էր խաչ,



ԱՆԻ. Ավագ դռանը հարող աշտարակները վերականգնումից առաջ և հետո, հատված «վերականգնված» աշտարակից

ստորին կեար: Վերականգնումից հետո պատկերաքանակն ամփոփվել է պարզ ուղղանկյուն շրջանակի ներքո, իսկ պարսպապատը շարվել է առանց խաչաքանակի և լուսամուտների:

Գլխավոր մուտքի աջ կիսակործան աշտարակը ծախսակողմնում գտնվող համանման աշտարակի նմանությամբ ամբողջացվել է արտաքուստ սրբառաշ շարվածքով, իսկ ներքուստ սրբառաշի փոխարեն շարվել է կոպտատաշ քարերով:

**Զ. Քարերի (Քայրուրի) ամրոց.** ամբողջությամբ վերականգնվել են բերդապարիսպները: Սույն գույնի քարից շարված հին պարիսպները:



**ԲԱՐԵՐԴ. հատվածներ «վերականգնված» բերդապարիսպներից**

շարվել-լրացվել են բաց գույնի քարակ երեսապատի քարերով: Վերականգնված պարսպապատն արդեն տեղացիներն այլանդակել են ներկագիր խօզքանքներով: Երևույր՝ եկեղեցիների պատերը մակագրություններով փշացնելը, ցավոր, այսօր մեզ մոտ էլ է տարածված:

**Է. Սպերի բերդամիջի եկեղեցի.** տեղի է ունեցել մասնակի վերականգնում ակնքախ սխալներով: Սեծ շափի մուգ գույնի քարերով սրբառաշ հին շարվածքը լրացվել է կրկնակի ավելի նեղ, բաց գույնի քարերով, որոնց կարերի միջև առկա շարդարացված տարածությունը ծածկվել է անփութորեն իրականացված պաղով: Արդյունքում խախտվել է եկեղեցու քարաշարքերի իրական մասշտարք, և աղճատվել է արտաքին տեսքը:



**ՍԵԼԵՎԿԻԱ. բերդի վերականգնված աշտարակներից մեկը. հատվածներ «վերականգնված» բերդապարիսպներից**


**Թ. Կողմիկոսի բերդ.** գտնվում է Կիլիկիայում: Բաղկացած է երկու առանձին ամրոցներից, որոնք գտնվում են ծովափին և հանդիպակաց կղզու վրա: Կղզու ամրոցը մաքրվել է վայրի բուսականությունից և ամրողությամբ պեղվել: Արդյունքում բերդամիջի եկեղեցուն կից հայտնարերվել են խճանկար հատվածով հոռմեական շրջանի կառույցի հիմքեր, որոնց ժամանակավոր պահպանության համար գործածվել է մոմլաք: Պարիսպների քայլայված արտաքին և ներքին մակերեսները մասնակի վեր-



կանգնվել են երեսապատի բարակ քարերի նոր շարքերով:

Ծովափին գտնվող ամրոցում նույն ձևով են վերականգնել մուտքին հարող հատվածը և ծովահայաց կամարի վերնամասը:

**Ժ. Անամուրի բերդ.** գտնվում է Կիլիկիայում: Վերականգնվել են բերդի մուտքերը, որոնցից մեկի վերնամասն ամրողացվել է ոչ թե քարով, այլ սվաղի շերտով: Մուտքի բարավորին գտնվող քարի շրջանակի վերին հատվածը, փոխանակ Անիի զի-




ԱՆԱՄՈՒՐ. բերդի ընդհանուր տեսքը և մուտքի բարավորը «վերականգնումից» հետո

նանշանի ձև այստեղ ևս անհրաժեշտարար կրկնելու, լրացվել է որևէ կերպ չիմնավորված հնգանիստ ավարտով:

**ԺԱ. Տիգրամակերտի (այժմ՝ Սիլվան) բերդ.** վերականգնվել է բերդի մի աշտարակը, որի ձախ անկյունը լրացվել է հնակերպ ելուստավոր, սակայն դարձյալ բարակ երեսապատի քարերով:

**ԺԲ. Մալաքաղի կամուրջ.** գտնվում է Դիարբեքիրի գավառի Մալաքաղե գյուղի մոտ: Սիարոհչը կամրջի երկու խելերի որմերը սվաղել են: Քարի

ԿՈՌԻԿՈՍ. բերդի արևելյան աշտարակը վերականգնումից առաջ և հետո



ՏԻԳՐԱՆԱԿԵՐԾ. հատված բերդի «Վերականգնված» պարսպից


շարվածքի նմանություն ստեղծելու նպատակով սկալի վրա խազեր են քաշվել: Սպահելիս հարթեցնան խողովակները տեղադրելու ժամանակ հին



ՄԱԼԱՐՄԱՆ. «Վերականգնված» կամրջի ընդհանուր տեսքը և հատված

քարերի արտաքին մակերեսը վնասվել է նոր փոր-փածքների պատճառով:

**ԺԴ.** Աղանայի բազմաթռիչք կամուրջ. խնամքով վերականգնվել է կամրջի վերնամասը: Անցուղու հենապատերի մեջ տեղադրվել են քարե ջրհր-



ԱՂԱՆԱ. Վերականգնված կամրջի ընդհանուր տեսքը և հատված

դաններ, որոնք այսօր ել ապահովում են շահագործվող կամրջի անցուղու ջրահեռացումը:

**ԺԴ.** Աղանայի բնակելի տներ. մինչև Մեծ Եղեռնը հայերի կառուցած հին տներն Աղանայում աղ-





ԱՂԱՆԱ. Վերականգնված բնակելի տուն

յուսաշեն էին: Դրանք այժմ վերականգնվում են առանց պահպանելու նախնական տեսքն ու առանձնահատկությունները: Զնափոխվում են տների քիվերը, պատշգամբների թեք հենարանները (պարզ փայտե հենարանները փոխարինվում են ձևավոր հենարաններով): Այս ձևով այլափոխվում է արտաքին տեսքը:

**ԺԵ. Արքանարի Սր. Խաչ Եկեղեցի.** 2005 թ. Թուրքիայի փարչապետի և մշակույթի նախարարության որոշմամբ սկսվում են Արքանարի Սր. Խաչ Եկեղեցու վերականգնման աշխատանքները (վերականգնող կազմակերպություն՝ Kartalkaya proje İnşaat Sanayi ve Tic. Ltd. Şti. ve Er):


Վերականգնման աշխատանքների ողջ ընթացքին մասնակից պոլսահայ ճարտարապետ Զաքարիա Միրդանօղլուն նշել է. «Նախքան նորոգությունը որոշվեց, որ ոչ մի նորամուծություն չի արվելու, այլ Եկեղեցին պահպանվելու է ինչպես որ էր: Վերնամասի կոտրված ծածկասալերը փոխարինվել են նորերով, վերնամասը մաքրվել է բույսերից: Շակա-



տի ճեղքերը փակվել են շաղախով, որը պատրաստվել է Եկեղեցու քարը փոշու վերածելով և հիդրոլիկ կրաշաղախի հետ շաղախ պատրաստելով: Ճակատներում գտնվող հրաշալի քանդակներին ձեռք չի արվել, և դրանք մնացել են այնպես, ինչպես կային՝ ամրողացնելով կոտրված և պակաս կտորներով: Վերջում Եկեղեցին լվացվել է քարձր ճնշմամբ մաքուր ջրով: Մաքրության համար ոչ մի տեսակի քիմիական նյութ կամ գել, պակ կամ

**ԱՂԹԱՍԱՐ. Սր. Խաչ վանքի տեսքը վերականգնման ընթացքում և հետո. ակնառու է իհմ դրոշմ անհարկի վիթխարի նոր դրոշով փոխարինելը**

սանրի նման գործիքներ չեն օգտագործվել: Սալահատակների ամբողջական քարերը թողնվել են իրենց տեղերում, իսկ դատարկ մնացած նասերն ամբողջացվել են տարբեր գույմի բնական քարերով: Եկեղեցու որմնանկարները շատ վատ վիճակում էին՝ կտոր-կտոր եղած, մայր պատից բաժանված և տեղ-տեղ ոչնչացված: Տարբեր տեղերից




**ԱՊԹԱՄԱՎԱՐ.** Սր. Խաչ վանքի հյուսիսարևելյան մակար մոտ գտնվող մատուռը. հատված գլամածն վերջույթներով ատամնաշար հին ծածկապատճերից և մատուրի տաճիքը հարթ սալերով երեսապատումից հետո

Վերցված որմնանկարների նմուշներն ուղարկվել են լաբորատոր տարրալուծման, որից հետո որոշվել է «բուժման» եղանակը: Նախ «բուժումը» փորձվել է փոքր եղբերի վրա: Դրական արդյունքից հետո այն կատարվել է բոլոր մակերեսներում: Որմնանկարների պատի հետ միացած մասերն ուժեղացնելու նպատակով սրսկվել է հատուկ նյութ, իսկ դրանց մակերեսը՝ մաքրվել: Ներկված կապույտ ներկը և բոլոր կեղտերը մաքրվել են: Եկեղեցու շուրջը կատարված պեղումներից հայտնաբերվել են վաճական համալիրի խոհանոցը, ճաշարանը, աշխատանքի և հանգստյան սենյակները, դպրոցը, կառավարչական շենքերը և պահեստները<sup>4</sup>:

Սր. Խաչ եկեղեցու հյուսիս-արևելքից կից մատուրի պահպանված լուսանկարից հստակ երևում է, որ նախկինում շինուրյունը ծածկված է եղբայրական աստամնավոր ծածկասալերով: Դրանցից մինչև 20-րդ դարի սկզբները պահպանվել էին վերին շարքերը, որոնք և բավարար հիմք կարող էին ծառայել հուշարձանն իր նախնական հորինվածքով վերականգնելու համար: Սակայն փոխարենը հանդիպավի նախապատվությունը տրվել է ուշ ժամանակներում մի կերպ և պարզագոյն եղանակով իրականացված նորոգության կերպին: Ըստ էության, նորոգության, այլ ոչ վերականգնման սկզբունքին հետևելով, նոյն սխալը գործվել է նաև եկեղեցու լանջերի որոշ հատվածներում: Այդ պատճառով հուշարձանը չի վերագտել կառուցման ժամանակին հարիր կերպարը և արտացոլում է կառուցման գրեթե հազար տարի անց իրականացված, սահմանափակ միջոցներով խեղճ ու աղքատիկ նորոգության մոտեցումը:

Ինչ վերաբերում է հյուսիսային մատուրի ավագանի խորշին, ապա այն, հակառակ իր նախնական նշանակության, ներկայումս վերածվել է մոմավառության վայրի:



Գավթի հողածածկը փոխարինվել է քարե հարթ ծածկասալերով, որի տակ կատարվել է ջրամեկուսացում փարերային ջրամեկուսիչ շերտով:

Եկեղեցու արևելյան ճակատի լուսամուտի ներքևում 1980-ական թվականներին միտումնավոր ջարդած խաչաքանդակի (պատկերաբանդակը խորիրանշում է խաչի համբարձման տեսարանը) պակասող մասը լրացվել է մշակված քարի կտորով:

Հարավային արսիդի երկրորդ հարկի քարե քանդակագրդ քաղրիքը, որն ավերվել էր նախքան նորոգությունը, փոխարինվել է մետաղյա ձողերին ամրացված ապակեպատ հենապատով:

Որմնանկարները խնամքով մաքրվել են կեղտից և հետազայի հավելում կապույտ ներկից, որոնց տակից բացվել են վառ գույներով պահպանված հին որմնանկարները, որոնք ել ամրակայվել են:

Սր. Խաչ եկեղեցու հարավ-արևելք գտնվող Սր. Ստեփանոս մատուռը մասնակի է վերականգնվել: Տանիքը պատվել է հարթ ծածկասալերով: Սակայն հյուսիսային և հարավային ճակատներում՝ քիվագոտու տակ, շարվել է բարակ երեսապատի քարերի երկու շարք:

Պեղվել-բացվել են եկեղեցու հարավում գտնվող բազմակացարան շինության, կաթողիկոսարանի և

<sup>4</sup> The Gate, sayı 77, Eylül 2006: Zakarya Mildanoğlu: sayfa: 28-30.



այլ կառույցների պատերի ստորին շարքերը, որոնց պահպանման նպատակով պատերին երկու կողմերից կցվել են իրար վրա դարսված ավազով լի սպիտակ պարկեր: Պահպանության խնդրի նմանօրինակ լուծումն իր նպատակին կարող է ծառայել խիստ սահմանափակ ժամանակահատվածի համար, քանի որ պարկերի՝ անխուսափելիորեն քայլայվելուց հետո ավազը կվերտուսի տարածքը: Բացի այդ՝ սպիտակ պարկերի շարքերը հակագեղագիտական տպագրություն են բողնում:

Ի դեպ, 2006 թ. կղզու եզրին տեղադրված թուրքական փոքրիկ դրոշը հուշարձանախնդրի վերականգնման ավարտին փոխարինվել է անհամենատարած բարձր ու մեծ դրոշով, որն անհարկի մրցում է համալիրի հետ:


**ԺԶ. Կարսի Առաքելոց եկեղեցի (1998 թ.-ից վերածվել է Գմբեթ անվանք մզկիթի):** Եկեղեցու վերականգնումը սկսվել է 2007 թ. հուլիսին, որը նախատեսված էր ավարտել նույն թվականի դեկտեմբերին: Աշխատանքները կատարել են «Դամարջը Ինչար» (Damarcı İnovaat) շինարարական կազմա-



ԿԱՐՍ. Առաքելոց եկեղեցու «վերականգնումից» առաջ և ընթացքում

կերպությունը «Զուրշար Գենչ» (Kürşat Genç) կազմակերպության վերահսկողությամբ:

Տանիքը մաքրվել է խոտերից, վերականգնվել են ծածկասալերի քայլայված հատվածները: Թույլ է տրվել կոպիտ սխալ գմբեթի վեղարից քացի՝ տաշվել-հարթեցվել են եկեղեցու մնացած մասերի հին ատամնավոր ծածկասալերի՝ մասամբ քայլայված կիսագլանած ելուստները: Դրանք փոխարինվել են առանձին քարերից նոր մշակված երկար ելուստներով, որոնք ել, առերևույթ նմանվելով հին միակտոր ծածկասալերին, իրականում շա-



Ա Բ

ԿԱՐՍ. Առաքելոց եկեղեցու ծածկասալերը, ա. «վերականգնած» տարբերակը, բ. ինչպես պետք է վերականգնվեր

դախով ամրացվել են հնի տեղում: Արդյունքում նորահնար ծածկասալերը զուրկ են ջրապահպանիչ նշանակությունից և ունեն սուսկ դեկորատիվ բնույթ:

Անփոփելով կարելի է եզրակացնել, որ թուրքիայում սկիզբ է առել հայկական հուշարձանները վերականգնելու միանշանակ ողջունելի շարժում,

որի շնորհիվ կանխվում է հուշարձանների հետազաքայքայքայումը: Սակայն միևնույն ժամանակ հայկական միջնադարյան ճարտարապետության կառուցողական սկզբունքներին անհաղորդ լինելու հետևանքով վերականգնողական աշխատանքներն իրականացվում են մասնագիտական սխալներով:

Ելնելով պատմական հուշարձանները հնարավորինս անթերի վերականգնված տեսմելու և այդ կերպ սերունդներին ժառանգելու նախանձախնդրությունից՝ գտնում ենք, որ այս բնագավառում խիստ շահեկան կարող է լինել հայ և բուրք վերականգնողների մասնագիտական համագործակցությունը:

## ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ՈՇՏՈՒՆԻՔԻՑ

Էմմա Աբրահամյան

Գրության ծածկագիր տեսակն ունի վաղեմի պատմություն և առկա է աշխարհի գրեթե բոլոր գրավոր լեզուներում:

Հայ իրականության մեջ դարեր շարունակ կիրառվել են ծածկագրման մի շաք եղանակներ, որոնք բնութագրվում են որպես ասելիքը գրավոր հաղորդելու այլնուրանքային ձևեր:

Մեզանում ծածկագրելու ավելի հաճախ համեմատում են ձեռագրերում: Մինչդեռ քարի վրա այդպիսիք սակավադեպ են:

Սարի վրա արձանագրված ցարդ գիտությանը հայտնի հնագույն ծածկագիրը վերաբերում է դարի 30-ական բվականներին: Այն գտնվում է Ավանի տաճարի արևելյան ճակատին և վերաբերում է Եզր կարողիկոսին: Երկլեզվյան է՝ հայերեն և հունարեն: Ծածկագրության կիրառված տեսակը փոխարինացիրն է<sup>1</sup>:

Հաջորդը Սյունիքի Արծվանիկ գյուղից 1 կմ արևմուտք գտնվող եկեղեցու ներսում Ժ-ԺԱ դարերին բնորոշ մի խաչքարի թիկունքին փորագրված ծածկագիրն է, որտեղ միանգամից օգտագործված է զարդարանքաման վեց տեսակ՝ սյունակետագիր, կետագիր, փոխարինագիր, գումարգիր, աջից ձախ և երկրանալի (աջից ձախ և եղբայրգիր)<sup>2</sup>:

2006 թ. Վասպուրականի Ռշտունիք գավառի երկու տարբեր հնավայրերում հայտնաբերվեց ցայժմ պատմությանն անհայտ միանգամից երկու նոր ծածկագիր հուշարձան, երկուսն էլ փորագրված խաչքարերի վրա: Դրանցից մեկը գտնվում է Շատվան հինավուրց գյուղի՝ տակնուրա արված գերեզմանոցում<sup>3</sup>, երկրորդը՝ Վանա լճի հարավային ափից ոչ հեռու՝ Գանձակ գյուղին մերձ Սրբովմաս վանքի գերեզմանոցում:

Առաջինը ներկայացնենք Սրբովմաս վանքի գերեզմանոցում (ծ. մ. 1936 մ) գտնվող խաչքարը (պահպանվել է ստորին հատվածը, չափերը՝ 58 x 44 սմ), որը կերտվել է կապտավուն կարծր ավագարից և ունի անկանոն եղրագիծ: Հորինվածքի



**ՈՇՏՈՒՆԻՔ (ԳՅԱՎԱԾ) ԳՎԱՍՈ, ԳԱՆՉԱԿ ԳՅՈՒՂ. Սրբովմաս վանքը և սյունակետագիր ծածկագրով խաչքար վանքի գերեզմանոցում**

<sup>1</sup> Ղաֆարարյան Կ. Գ., Ավանի երկլեզվյան արձանագրությունը, Երևան, 1945: Տես նաև մույնի՝ Երևան. միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975, էջ 190-192:

<sup>2</sup> Աքրահամյան Ա. Գ., Շահիմյան Ա. Ն., Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագրը և նրա վերծանությունը, «ՊԲՀ», 1975, № 3, 113-125: Տես նաև Աքրահամյան Ա. Գ., Հայկական ծածկագրություն, Երևան, 1978, էջ 180-189:

<sup>3</sup> Հարկ է նշել, որ երբեմնի գերեզմանոցի խաչքարերի մի մասի պահպանան պատճառը դրանք որպես ոչարժեած աղ տալու մեղած գրծածելի էր:

կենտրոնում ոճավորված կենաց ծառից սկիզբ առնող հիմնախաչն է՝ ներառված մանրանկարչության մեջ խորան անվանվող սյունակամարի մեջ: Վերջինիս սյուների մեջ քանդակված են ավելի փոքր ու պարզ մեկական խաչեր ևս: Խոյակներին



պատկերված են քառատերև զույգ ծաղկազարդեր: Երկտող արձանագրությունը փորագրված է եղել հիմնախաչի թևերի միջև (պահպանվել է միայն երկրորդ տողը) և խաչքարի ստորին մասում: Վերջինս սյունակետագիր ծածկագիր է:

Այստեղ 1-4 ուղղահայաց գծերը ցույց են տալիս այրութենի բվային համակարգի միավորները, տասնավորները, հարյուրավորները և հազարավորները, իսկ աջ կողդին առկա կետիկները՝ հնչյունի հերթական համարները:

||||: |. ||||: |: ||: |||:  
U    a    r    q    h    u

Ամբողջական վերծանությունն է.  
... / Յ(իսու)ս Ք(րիստո)ս, / Սարգիս:

Ըստ ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների, ինչպես նաև տարածաշրջանի այլ խաչքարերի հետ համեմատական ուսումնահրությամ՝ խաչքարը կարելի է բավարել ԺԴ-ԺԵ դարերով:

Ծածկագիր երկրորդ հուշարձանը գտնվում է Ռշտունյաց Շատվան գյուղի ավերված գերեզմանոցում (ծ. մ. 1926 մ), որտեղ միջնադարյան տեղահան և մեծ մասամբ կոտրատված շուրջ երկու տասնյակ խաչքարերի թվում գտնվեց մեկը՝ կերտված կապտավոն բազալտից (պահպանվել է խաչքարի ստորին կեսը, չափերը՝ 120 սմ բարձրություն և 130 սմ լայնություն):



ՈՉՏՈՒՆԻՔ (ԳՅԱՎԱԾ) ԳԱՎԱՌ, ՇԱՏՎԱՆ ԳՅՈՒՂ. ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Խաչքարը հարդարված է կենաց ծառից սկիզբ առնող հիմնախաչով, որի երկու կողմերում պատկերված են շրջանակներով ներփակված գեղաքանդակ բուսական վարդյակներին հենված մեկական համանման փոքր խաչեր: Նույնառ ավելի փոքր ևս մի խաչ էլ քանդակված է հիմնախաչի ստորին թևի աջ կողմում: Հորինվածքը երիգում են երկու կողմերից բուսազարդ խոյակներով զարդարված և խորանանման կամարով միացած զույգ սյուները:

Երկտող արձանագրությունը գետեղված է հիմնախաչի թևերի միջակայրում (2 տող), իսկ եռատող ծածկագրությունը ստորին մասում (2 տող) է և ձախ եզրին (1 տող՝ յուրաքանչյուրը փորագրված ծածկագրման մի եղանակով:

Առաջին տողը ծածկագրված է մեզ արդեն ծանր սյունակետագիր եղանակով:


||: |||: |. ||||: |: ||: |||: ||: ||||: |: |||: |||:  
q    U    a    r    q    h    u    k    p    q    h    u    s    u

||: |. ||||: |||: |||: |||: |||: |. ||||: |:  
կ    ա    ն    կ    ն    ե    ց    ը    ա    ր    է

Ծածկագրի վերծանությանը հարկ է հավելել նաև սղված կամ չփորագրված մի քանի տառերը, որով կստանանք հետևյալը.

ԶՍարգիս կր(աւճաւոր) զիսաչս կանկնեց(h), բարէ(իսաւ):

Հաջորդ ծածկագրությունը ևս 1 տողով փորագրված է գումարգիր եղանակով: Գոյություն ունի գումարգիր ծածկագրության վերծանության մի քանի բանալի: Այստեղ գրքածված է գումարման գործողությունը, այսինքն՝ զաղտնագրված մեկ տառի թվական արժեքը կազմում է երկու տառի գումարը (այսպես, օրինակ՝ «ԳԳ»-ն (3+3) հավասար է «Զ» տառին (6), բացառություն է կազմում միայն «Ա» տառը, որն օգտագործված է իր հնչյունական արժեքով):



ԳԳՈՒԱՍՎԱԲԺՇՈՈԾՄԺՄՑԲԳՎՎԳԴՏՏՐ  
զ Ս ա ր գ ի ս յ ի շ ե ց է ք

Երրորդ տողը ծածկագրված է եղբայրութիւն եղանակով, այսինքն՝ յուրաքանչյուր տառ փոխարինում է իր նախորդին:

Վ Բ Յ Դ Լ Վ  
Ս ա ր գ ի ս

Ամբողջական արձանագրությունն է.

*S(t)ր Ա(սոսուած) / Յ(իսուս) Ք(րիստոս), / զՍար-  
զիս կր(աւճաւոր) զիսաչս կանկնեց(h), բարէ(յսաւս),  
/ զՍարզիս յիշեցէր, / Սարզիս:*

Ամփոփելով նշենք, որ ներկայացված ծածկագիրը արձանագրություններ պարունակող զույգ խաչքարերը գեղարվեստական և ոճական առանձնահատկությունների առումով ոչ միայն ունեն ակնառու ընդհանրություններ, այլև ներկայանում են որպես ԺԴ-ԺԵ դարերում կերտված վասպուրականյան խաչքարագործական յուրօրինակ դպրոցի հատկանշական նմուշներ:

Ինչ վերաբերում է երկու խաչքարերի վրա միևնույն՝ Սարզիս անձնանվան հիշատակությանը, հաշվի առնելով նաև հնավայրերի՝ միմյանց բավականաչափ մոտ գտնվելու հանգամանքը, կարծում ենք, որ խաչքարերը կերտվել են նույն անձի՝ ոշտունեցի Սարզիս կրոնավորի հիշատակին:

## ԾԱՌԱՋԱՐԻ ՎԱՆՔԸ

Սամվել Կարապետյան

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Գարեղյանք գավառի Կեչըրոր բերդաքաղաքից 5 կմ հարավ-արևելք (մինչև 1920 թ.) Կարսի մարզի Կաղզվան գավառում, այժմ՝ Կարսի իր, Կաղզմանի իշխան, Քյորեկի բուջաղ), նախսկինում Պրուտ, այժմ Չուրուրայվա վերանվանված 40 տուն քուրդ բնակիչ ունեցող գյուղից 1,2 կմ արևմուտք՝ ձորակի ճախ կողմով ձգվող հարավահայաց ժայռապարի հողմահար և քայրայված հարավահայաց կողմում՝ ծովի մակերևույթից 1949 մ բարձրության վրա (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°14' 51.69", E 42°54' 49.07"), պահպանվել է մինյանց հետ հաղորդակցվող կամ առանձին մուտքերով մեկ եկեղեցոց և առնվազն վեց մատուններից և հարավից այլ շինություններից բաղկացած վաճական վիմափոր համալիր:

Հակառակ իր հույժ հետաքրքրական կառուցվածքին և վիմագիր ընդարձակ արձանագրությունների առկայությանը (արձանագրություններում հիշվում են Ժ դարի պատմական հայտնի դեմքեր՝ վանքը մինչև վերջին տարիներս երթեւ չի արժանացել ոչ միայն մասնագետների, այլ նաև տեղագիր հեղինակների ուշադրությանը: Այս իմաստով բավական է նշել, որ վանքի գոյության մասին տարօրինակ կերպով հիշատակություն չունի նույնիսկ Կարսի թեմի առաջնորդ Կյուրեղ Սրապյանը, ով 1878 թ. կազմել էր ողջ Կարսի մարզի բնակավայրերն ու հնավայրերը ներկայացնող բավական ընդարձակ մի տեղեկագիր, որտեղ գրանցվել էին Կեչըրից հարավ գտնվող ավելի անշան հուշարձանները<sup>1</sup>:

Միայն 1999 թվականին, ի դեմս շոտլանդացի հետազոտող Սրիվեն Սլիմի, հնավայրն ունենում է իր առաջին մասնագետ այցելուն: Նա լուսանկարում և սխեմատիկ չափագրում է վանքի հատակագիծը<sup>2</sup>:

Այնուհետև հնավայր է այցելում ճապոնացի երկրաշարժագետ Շիրո Սասանը: Նրա՝ տեղում կատարած մի քանի լուսանկարները փոքրիկ ու-

սումնափորյան հետ հրատարակվում են 2009 թ.<sup>3</sup>:

Սրանով օտարազգի երկու հեղինակները, ըստ էության, միմյանցից ամեախ հայտնագործում և գիտական շրջանակներին առաջին անգամ իրազեկում են նորահայտ վիմափոր վանքի գոյության մասին, սակայն չկարողանալով պարզեցնել հնավայրի պատմական անունը՝ վանքը կոչում են մերձակա, ներկայում քրդաբնակ գյուղի անունով:

Ենելով հուշարձանախումբն ավելի հանգամանալից ուսումնասիրելու կարևորությունից՝ 2008 թ. հնավայրը ներառվում է ՀՃՈՒ կազմակերպության գիտարշավի ուղեծրի շրջանակներում (աշխատանքները շարունակվում են նաև 2010 թ.), որի արդյունքում պարզվում է հետևյալը:

Նախ վանքի պահպանված միակ եկեղեցու արևատյան և հյուսիսային որմերին առկա վիմագիր արձանագրությունները պարզում են վանքի՝ Ժ դարում կառուցված լինելու հանգամանքը, իսկ սկզբնադրյունների ուսումնասիրությունն էլ հստակեցնում է, որ խնդրո առարկա նորահայտ վիմափոր հուշարձանախումբը միջնադարյան աղբյուրներում վկայված, սակայն տեղադրությամբ ցարդ անհայտ մնացած Ծառաքարի վանքն է:

Ստորև ներկայացնում ենք նորահայտ վանքը Ծառաքարի հետ նույնացնելու հիմքերն և ապացույցները:

Հայտնի է, որ Ծառաքարը միջնադարյան Հայաստանի մեծահամբավ վանական այն համալիրներից էր, որը դարեր անց կորցրել էր իր իր նախկին փառք ու նշանակությունը և մոռացության էր մատնել այն աստիճան, որ արդեն մեր օրերում անորոշության թմբիրում էր հայտնվել նաև վանքի տեղադրության հարցը:

Ժիշտ է, դեռևս Ժ դարի վերջերին Ղ. Ալիշանը սկզբնադրյուններից քաղած տեղեկությունների հիման վրա արդեն բավականաչափ որոշակի մատնանշել էր վանքի հնարավոր տեղադրության սահմանները. «...Ծառաքար ի բանից պատմչացն և վկայութեամբ աշխարհագրին յիշեցելոյ, յայտնի լինել մերձ Կչըրոր, յամրագոյն ուրեք վայրի լեռնակողմանն. նախ շինեալ վիմափոր վանք...»<sup>4</sup>, որին հետևել էր գրեթե նույնը կրկնած Ս. Էփրիկյանը.

<sup>1</sup> Օրինակ՝ «Կեչեվանի հարավակողմ, 1/2 ժամ հետափորությամբ, ծորի մը մեջ Քրիլսէ քիոյի ավերակներու մեջ կիսափու վանք մի կա, որո անոն նոյնական զգիտցվիր» (**Սրապյան Կ.**, Ստորագրության Կարսի շրջակայ գիտօրէից և վասորէից, ԲՀԱ, 1970, № 2, էջ 92):

<sup>2</sup> Սրիվեն Սլիմի ուսումնասիրական ճամփորդությունը հովանափուած էր ՀՃՈՒ (RAA) կազմակերպության կողմից, ուստի նյութերը պահպան են կազմակերպության թվայնացված դիմում:

<sup>3</sup> Historical architecture of Eastern Anatolia in the middle age, under the prospect on interactive building-techniques. edited by Shiro Sasano & Sasano Seminar, Yokohama, 2009, էջ 127-128:

<sup>4</sup> **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վեմնալիկ, 1890, էջ 47:

«Այրարատայ Գաբեղենք գաւառի մեջ Կէչրորի մօտ կը կարծուի ըլլալ երբեմն այս անուամբ վանք մը և գիւղ»<sup>5</sup>: Ավելի ուշ, սակայն, վանքի տեղադրության խնդրում եղած հստակությունն էլ ավելի էր խճողվել, քանի որ առաջ էր քաշվել վանքի՝ Անիի մոտերքում գտնված լինելու հնարավոր տարրերակը ևս<sup>6</sup>, իսկ հայտնի բառարանում նշվել է. «...ըստ ոմանց՝ Գաբեղյանք գավառում, հավանաբար Կէչրոր ավանի մոտ, ըստ այլոց՝ Շիրակ գավառում, Անիի մոտ...»<sup>7</sup>:

Առկա անորոշությունը ցրելու խնդրում մեծ նպաստ է բերում 1656 թ. ստեղծված Աշխարհացույցի հիշատակարանը, որտեղ նշված է. «...գաւառն Գաբեղենից և բերդն Կապուտ, որ կոչի Արտագերեից, անդ է և Կեչրաւը քաղաքն և Ծառաքարի վիմափորի վանքն, որ կա գերեզման Կէչառեցի Խաչատուր Վարդապետին...»<sup>8</sup>:

Սույն վկայությունը միանգամից պարզում է հույժ կարևոր երկու խնդիր. նախ որ Ծառաքարի վանքը վիմափոր էր և երկրորդ, ըստ ամենայնի, գտնվում էր Կէչրոր քաղաքից ոչ հեռու:

Ինչ վերաբերում է ԺԳ-ԺԴ դարերում ապրած տաղերգու և կրթական գործիչ Խաչատուր Կէչառեցու<sup>9</sup> գերեզմանի՝ Ծառաքարի վանքում գտնվելու հիշատակությանը, ապա սա անուղակի կերպով օգնում է հավելյալ մի վկայությամբ ևս համոզվելու, որ Ծառաքարի վանքն իսկապես գտնվում էր Կէչրոր բերդաբարձր մոտ: Խոսքը վերաբերում է Երեմիա Չելեքի Քյոնուրճյանի՝ 1691 թ. կազմած քարտեզում առկա հետևյալ հիշատակությանը. «Բասենյ սահմանակից Կէչրօր քաղաք եւ գերեզման Խաչատորյ Վարդապետի»<sup>10</sup>: Ծիշու է, այս վկայության մեջ Ծառաքարի վանքի անվան ուղղակի հիշատակություն չկա, բայց 1656 թ. Աշխարհացույցի հարորդումից արդեն հայտնի է, որ Խաչատուր Կէչառեցին հանգչում էր Ծառաքարի վանքում, իսկ ըստ Քյոնուրճյանի՝ Կէչառեցու գերեզմանը գտնվում էր Կէչրոր քաղաքի մոտ:

Նորահայտ վիմափոր վանքը Ծառաքարի հետ նույնացնելու խնդրում, կարծում ենք, գրավոր հիշատակություններից զատ, պակաս կարևոր չէ նաև տեղանվան իմաստային ստուգաբանությունը: Բանն այն է, որ յուրաքանչյուր այցելու հեշտությամբ կարող է նկատել, որ վանական համալիրի



**Ծառաքարի վանքի և Պրուտ (այժմ՝ Չուքուրայվա) գյուղի տեսքը տիեզերքից**

վիմափոր կառույցները կերտված են բնականից շերտավորված (նաև գումային ընդգծմամբ) լեռնային բավականին փոխառ ապարների մեջ, որոնք առաջին իսկ հայացքից հիշեցնում են հատված ծառի տարիքը մատնանշող միմյանց զուգահեռ քազում օղագծերը: Հանգամանք, որն ակնքախորեն ծնննակ է տվել վանքի Ծառաքար անվանի, այսինքն՝ ծառին նմանվող քարի մեջ կերտված վանք:

Տվյալների և եզրակացության ծիշտ այս հիմքով էլ արդեն ճշտված տեղադրությամբ Ծառաքարի վանքն առաջին անգամ լուսանկարներով ներկայացրել ենք 2009 թ.<sup>11</sup> ավելի հանգամանալից ուսումնասիրությունը վերապահելով սույն հոդվածին:

**Պատմություն.** Ծառաքարի վանքի պատմական անցքերի լուսաբանման համար առաջին և ամենահին վկայագրերը հենց վանքում գտնվող, ցավոր, բավականաչափ քայլաված վիճակով մեզ հասած երեք վիմագրերն են: Դրանցից առաջինը գետեղված է եկեղեցու արևմտյան ճակատին: Ունի խառը գրչություն: Փորագիր 11 տողերը և տառաչափերը կանոնակարգված չեն: Այն նվիրատվական բնույթի է և կրում է 952 թվականը: Վիմագրում հիշատակված են Վանանի գավառի վերակացու Տիրանը և Ամատունյաց Սահակ Եպիսկոպոսը.

**ՆԱ (952).** յայս / ձեռնագիր է / Տիրանոյ՝ Վանանի վերակացուին հայոց ... շահանշահ առի

<sup>5</sup> Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վեմետիկ, 1903-905, էջ 238:

<sup>6</sup> Յովհաննեսեան Մ., Հայաստանի բերդերը, Վեմետիկ, 1970, էջ 641-643:

<sup>7</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 842-843:

<sup>8</sup> Թօփմետան Յ., Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ Վարդապետների, մաս Ա, Վաղարշապատ, 1898, էջ 77:

<sup>9</sup> Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 46-47:

<sup>10</sup> Uluhogian G., Un antica mappa dell'Armenia. monasteri e santuari dal i al XVII secolo, Ravenna, 2000, էջ 83, 86:

<sup>11</sup> «Հայաստան» պատկերազարդ այբու, Երևան, 2009, էջ 277-279:



Ծառաքարի վանքի ըմբիանուր տեսքը հարավից

Էսու / ...որոստէ յազոն :Շ: (100) ... | ի կատ(ե)-  
պ(ան)մերուն<sup>12</sup> ի ժամ հրի յազոն :Շ: (100) փաս ...  
հորիացի վանս / :Շ: (100) փաս՝ Կարուց ի սուրբ  
Գիրգորի ... | ...վասն իմն ... վասն իմ հոգոյ ... ով /  
այս գրոյս հակառակա նզովեալ եղիցի յա(ստուծոյ)՝  
եւ տ(եառ)ն Տիրան եւ տ(եառ)ն Սահակա Ամ(ա)-  
սունեաց եախսկապոս[ա] / ...Յակոր եւ յա(ստուծոյ)՝  
եւ կատարիչ հր(ա)մանացս աւ(ր)ին(եալ) եղիցի /  
որ այս լքոյս հակառակա ի Յ եւ ԺԸ (318)-ի  
նզովեալ լիցի բաժին ընդ սատաճի է<sup>13</sup>:

Նույն եկեղեցու հյուսիսային որմին նոյնային գրչությամբ և դարձյալ կիսանդշ դրության մեջ մեզ է հասել 17 խառնիխուուն տողով փորագրված, նոյնպես Ժ դարից ավանդված ևս մեկ ընդարձակ նվիրատվական բնույթի արձանագրություն: Վիճագրում առանցքային կարեռություն ունի Վանանդի կամ Կարսի քագավորության հիմնադիր Մուշեղի<sup>14</sup> անվան հիշատակությունը.

... / ...աւրի... / ...կարս... / ...սուրբ Գրիգոր հրա-  
ման ...յամենայն / ...քառ... / ...ձեռազիր / ... / արդ յա-

ելու: Յանուն ա(ստուծոյ) կամա եղեւ յամենա... /  
...Մուշեղա հայոց քագաւորի եսու ... | ... եւ զջրհորձ  
լերում եւ դաշտով ի ... | [Վ]անքս եւս եկեղեցիքս  
հրամանով տ(եառ)ն Սիրա... ...մատուցան / ... եւ ե-  
սու վասն իմ ե... | ոց եւս խարորդի հետ իմ անցման  
ժք: (12) ալր ժամ յամենայն ... | ...ն եկեղեցիքդ, որ  
այս վճիս ստեղծ աւ... քաժինս ստանալ / ... ՅԺԸ  
(318) նզոված է, կատարիչ(ր) հրամանաց ... դատող  
նորա տան / ... աւրինեալ եղիցի ... | ...քաղետու-  
թի(ւ)ն....:

Նոյնայես հայոց ՆԱ (952) թվականից Ծառա-  
քարից մեզ հասած առնվազն քառասոող (5-րդ տողի  
գոյությունը թեական է) երրորդ վիմագիրն էլ առա-  
վել վատրար վիճակում է: Նրա նշանակալի հատ-  
վածն արդեն անդարձ կորստյան է մատնվել ինչ-  
պես ժամանակի քայլայիշ ներգործության, այն-  
պես էլ վանդալական ավերիչ ուժի՝ հավանաբար  
գանձախուզության հետևանքով: Նրանից ներկա-  
յունս ընթերցվում է սոսկ հետևյալը.


ՆԱ (952) թվականութեանս] / հայոց .../ի Տի-  
րան<sup>15</sup>... / պէ... / ...

<sup>12</sup> Կատեապամ՝ այգեպան (տես Մայխանեանց Սա., Հայերէն քացարական քառարամ, հ. 2, Երևան, 1944, էջ 842-843):

<sup>13</sup> Հարկ է նկատել, որ վինազրի ամվերծանելի մնացած որոշ հասուվածներ թերևս ավելի ամբողջական կարելի է վերծանել, եթե այդ նպատակի համար հնարավորություն լինի տեղում ա-  
վելի շատ ժամանակ հատկացնել:

<sup>14</sup> Մուշեղ Ա (Ժմ. թ. անհու. - 984, Կարս) Կարսի քագավորու-

թյան հիմնադիրն է՝ Արասի (928-953) որդին և Աշոտ Գ Ողոր-  
մածի եղբայրը: Թագավորել է 963 թ.-ից: Իրեն քագավոր է  
հոչակել, եթր Աշոտ Գ Ողորմածը քագավորության մայրաքա-  
ղաքը տեղափոխում է Անի, իսկ Մուշեղին նշանակում Կարսի  
և համանուն գավառի կառավարիչ: Աշոտ Գ Ողորմածը Մու-  
շեղ Ա-ին ճանաչում է որպես իրեն ներակա իշխանության տի-  
րակալ:



Ծառաքարի վաճքի եկեղեցու արևմտյան որմին 11 տողով փորագրված արձանագրությունը և գրչանկարը

Գրչուրյամբ նախորդ արձանագրություններին և նման նվիրատվական ևս մեկ արձանագրություն էլ նշմարվում է վանքից հյուսիս-արևմուտք գտնվող խաչազարդ գմբեթարդով ավարտվող վինափոր սրահի ներսում:

*Յա. Քս. տր. ած. ող/որմի ամէա:*


Վանքի տարբեր հատվածներում նկատելի են նաև ուխտավորների ձեռքով ժթ-հ դարերում բողնված

առավելապես խազագիր մի քանի հակիրճ հիշատակագրություններ<sup>15</sup>, որոնց առկայությունը փաստում է ուխտավորների որոշակի շրջանակներին վանքն իբրև սրբատեղի հայտնի լինելը առնվազն մինչև քուրքերի կողմից Կարսի մարզի զավթումը 1920 թ.:

Վերը ներկայացված վիմագրերը կամ ավելի ճիշտ դրանց պահպանված հատվածները քեւ ուղղակիորեն որևէ տեղեկություն չեն հաղորդում վանքի հիմնադրության մասին, սակայն կարծում ենք,

15 Կարելի է ենթադրել, որ վիմագրում հիշատակված Տիրանը 952 թ. վիմագրում նշված Վանանդ գավառի վերակացու Տիրանն է:

16 Օրինակ՝ Ստեփան Զանգվարեամ, 1890: Գեղամ Պողոս սեամց, 1903:



Ծառաքարի վաճքի եկեղեցու հյուսիսային որմին 17 տողով փորագրված արձանագրությունը և գրչանկարը

որ դրանք փորագրվել են վաճքի կառուցումից անմիջապես հետո, երբ նորաստեղծ վաճքը նյութապես ապահովելու նպատակով նվիրաբերվել են հասուրարեր կալվածքներ և արտադրական միավորներ: Ինչևէ, Ծառաքարի վաճքը հիմնադրված պետք է լիներ ավելի վաղ, քան 952 թ., երբ արդեն գոյություն ունեցող վաճքի եկեղեցու արևմտյան որմին փորագրվել է մեզ հասած միակ թվակիր արձանագրությունը: Ժ դարի առաջին կեսով վաճքի թվագրման օգտին են խոսում նաև հոլշարձանախմբի հորինվածքային, ոճական-գեղարվեստական և հարդարանքի, ել առավել վիմագրերի գրչագրական

առանձնահատկությունների ուսումնասիրությամ՝ ստորև տրվող արդյունքները: Ինչ վերաբերում է վաճքի հիմնադրման խնդրու առքիվ նախկինում արտահայտված կարծիքներին, ապա առանց նույնիսկ ներկայացված վիմագրերին ծանոթ լինելու Դ. Ալիշանը նշել է, որ վաճքը կառուցված պետք է լիներ նախքան ԺՄ դարը. «...ոչ է յայտ երբ և յումէ. այլ յառաջ քան զԺՄ դար...»<sup>17</sup>, քանի որ արդեն 1028 թ. վաճքը վերանորոգվել էր և հարմարեցվել բերդի:

<sup>17</sup> Ալիշան Դ., Այրարատ, էջ 47:



Ծառաքարի վանքի եկեղեցու հարավից կից մախսարահի մուտքի բարավորին պահպանված առնվազն քառատող վիճագրի (952 թ.) մնացորդները

Թեկուզ 500-ամյա ընդգրկումով, սակայն ընդհանուր առմամբ վանքի հիմնադրման հարցում ճիշտ է կողմնորոշվել նաև Ը. Սասանոն՝ նշելով. «...ժայռափոր եկեղեցիների այս համալիրը հիմնվել է ոչ ավելի վաղ, քան մոտ 2 դարը և ոչ ավելի ուշ, քան մոտ ԺԱ դարը»<sup>18</sup>:

Ծառաքարի պատմության հետագա ընթացքի վրա որոշակի լույս են սփռում նաև պատմիչները, որոնց ժամանակագրական հաջորդականությունը ներկայացնում է հետևյալը: 1029 թ. վանքը հիշվում է Վեստ Սարգիս իշխանի՝ տեղում ծավալած շինարարական գործունեության կապակցությամբ. «Մեծապատի վեստն Սարգիս զկնի բազում շինուածոց՝ բերդից եւ եկեղեցեաց՝ գիրաշալի վանս զինձկօնս շինեաց. պայծառ պատակա զարդարեալ զուրքը քաւարանն՝ որ ճանաչի անուն սուրբ Սարգիս: Նաեւ զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ պարսպեալ հաստահերոյս կրով՝ բրգուն ծուլածոյս: Յորում եւ ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէրոգայ՝ շինէ երկուս այլ յարակից զմբերատրու՝ զուրքը Յովիաննես եւ զուրքը Սերենոս»<sup>19</sup>:

Շինարարական նույն աշխատանքների արձագանքը գտնում ենք նաև Մշիքար Այրիվանեցու

մոտ. «...տեր Պետրոս կաթողիկոսն՝<sup>20</sup> Սա շինեաց զՍուրմարի և զԾառաքար»<sup>21</sup>:

Կիրակոս Գանձակեցին նույնպես 1020-ական թվականների վերջերին իրականացված շինարարական աշխատանքների մասին նշել է. «Յատրս սորա»<sup>22</sup> մեծապատի Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից եւ եկեղեցեաց շինեաց եւ զփառաւոր վանքն զինցկօնսն եւ զեկեղեցին յանուն սրբոյն Սարգսի, եւ զԾառաքար վանքն բերդ արարեալ՝ պարսպեաց ամրագոյն, եւ եկեղեցիս շինեալ ի նմա փառաւորս»<sup>23</sup>:

Հաջորդ վկայությունն առնչվում է 1178 թ., երբ Կեչըրոյին տիրացած բուրք Ղարաշայը նվաճում է նաև բերդի վերածած Ծառաքարի վանքը. «Ի նոյն ատուր առաջ Ծառաքար ի գողոց իրամանաւ Ղարաշայ ամիրային Կեչըրոյ, որ վաճառեաց զնա Խզլավանայ ընդ բազում ոսկոյ. և նա բնակեցոյց անդ արս վնասակարս ոքք ոչ դադարէին յարենինեղութեն ի տուի և ի զիշերի. մինչև զքրիստոնեայս ի խաւարային անուննես ընկղոմեալ սովոր և գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանեին. որ և իինդ գ

20 Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը զահակալել է 1019-1058 թթ.:

21 Միսիքարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:

22 Խոսքը Բագրատումյաց Գաղիկ Ա-ին հաջորդած Հովհաննես-Սմբատ քազարորի մասին է (1020-1041 թթ.):

23 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, 1961, Երևան, էջ 89:

18 Shiro Sasano & Sasano Seminar, նշվ. աշխ., էջ 128:

19 Սամուելի քահանայի Ամենայ Հաւաքմունը ի գրոց պատմագրաց, 1893, Վաղարշապատ, էջ 106:

կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէ-ին»<sup>24</sup>:



1182 թ. Ծառաքարին տիրացած Ղարաչայը կործանում է տեղում գտնվող համբավավոր Գորոպու խաչը. «Ի վեցհարիւր երեսուն և մի թուին Խարաչայն որ էա զԾառաքար, և խորտակեաց կռանաւ զիսաչն Գորոպոյ կոչեցեալ...»<sup>25</sup>:

Ծառ չանցած՝ 1186 թ., Ծառաքարը վերստին ազատագրվում է անեցիների ուժերով. «Ի վեցհարիւր երեսուն և հինգ թուին առին Անեցիք զԾառաքար զհայրենիս տեսան Բարսդի<sup>26</sup>, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց ի կանանց և ի մանկանց»<sup>27</sup>:

Հետագա դարերում վաճրն այլևս գրավոր արքյուրներում գրեթե չի հիշվում<sup>28</sup>. Սակայն նկատի առնելով հայտնի տաղերգու և կրթական գործիչ Խաչատուր Կեչառեցու՝ Ծառաքարում հանզելու (ԺԴ դար) հանգանանքը՝ կարելի է ենթադրել, որ ԺԳ-ԺԴ դարերում վաճրը պահպանել է աշխույժ գործությունը: Ի դեպ, Կեչառեցու՝ վաճրում գործած և ամփոփված լինելու փաստը նույնիսկ դարերի հեռավորությունից այն աստիճան է կարևորվել, որ 1691 թ. կազմված քարտեզի վրա վաճրը, փոխանակ իր բուն անվանք հիշատակվելուն, պարզապես նշվել է որպես «զերեզման Խաչատրոյ վարդապետի»:

Ենթադրելի է, որ վաճրի վերջնական ամայացումը տեղի է ունեցել 1829-1830 թթ. Կարապետ եպիսկոպոս Բագրատունու կազմակերպած տեղաբնիկ հոծ հայության տեղահանությունից և գաղթից հետո:

**Ճարտարապետություն.** Երեսնի Ծառաքարի վաճրից ներկա դրությամբ պահպանվել են բոլոր այն կառույցները, որոնք վիմակերտ են և, ըստ այրմ, դժվար կործանելի, իսկ մնացած այն շինությունները, որոնք կառուցված են եղել քարուկրով, ժամանակի ընթացքում համատարած և խսպանենետացվել են: Հենց այս պատճառով էլ ներկա



<sup>24</sup> Հաւաքունն պատմութեան Վարդանայ Վարդապետին, Վենիամիկ, 1862, էջ 131:

<sup>25</sup> Նշվ. աշխ., էջ 132:



<sup>26</sup> Անիի առաջնորդ Բարսեն եպիսկոպոսը հիշվում է 1160-1191 թթ. Վիմագրերում (**Աճայշան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 396): «Ծառաքար՝ Անյու Բարսեն եպիսկոպոսին հայրենիքն էր և անոր տան սեփական ժառանգութիւն կը համարուե» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 238):

<sup>27</sup> Հաւաքունն պատմութեան Վարդանայ Վարդապետին, էջ 133: Տե՛ս նաև **Էփրիկեան Ս.**, նոյն տեղում:




<sup>28</sup> Վերը ներկայացված սկզբանադրյուրային հիշատակությունների հանրագումարը ցույց է տալիս, որ թեև ոչ այնքան հարուստ, սակայն, այնուանձնայնիվ, վաճրի մասին առկա են պատմական որոշակի հասրորդություններ, ուստի բնավ տեղին չեն ճապանացի հետազոտող Շ. Սասանյի պնդումը, թե «Պոտրտայի ժայռափոր եկեղեցիները չեն հիշվում ո՞չ պատմական փաստարթերում ո՞չ էլ այլ եեղինակների կողմից» (**Shiro Sasano & Sasano Seminar**, նոյն տեղում):

Ծառաքարի վաճրի հարավարեւյան կողմից բացված մուտքը 952 թ. արձանագրության մնացորդներով հանդերձ և հատակագիծն ըստ Միհեմ Միմի (1999 թ.)


Իուշարձանախումբն ընկալվում է որպես միայն զուտ վիմակերտ համալիր՝ բաղկացած 6 մատուռներից և օժանդակ այլ կառույցներով շրջապատված խաչաձև կեղծ զմբեթավոր մեկ զիսավոր եկեղեցուց: Վերջինս 10,67 x 8,31 մ ներքին չափերով ոչ մեծ սրահ է, որն արևելյան կողմում ունի անկանոն կիսարողորակ եզրագծով խորան: Բեմն աղոթարակից բարձր է 1,15 մ-ով: Ծածկը պսակված է փոքր-ինչ տծել շրջանի տեսք ունեցող կիսարողորակ, զագարում հավասարաք խաչի քանդակով պսակված զմբեթարդով, որը զմբեթատակ քառա-



Ծառաքարի վանքի հատակագիծը և դեպի հարավ բացվող լեռան ճակատը (չափազրությունը և գրաֆիկական մշակումը՝ ճարտ. Աշոտ Ղալույանի, 2010 թ.)



Ծառաբարի վանքի եկեղեցու ներքին տեսքը դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևելք, հարավ-արևմուտք և հյուսիս-արևմտակողմի տրոմպը



Ծառաբարի վանքի գլխավոր եկեղեցու սրահի և խորանի գմբեթարդները


կուտուն է միացած տվյալ պարագայում, անշուշտ, սուսկ դեկորատիվ նշանակություն ունեցող չորս անկյունային տրոմպերով: Ի դեպ, ինչպես խաչաքանդակը, այնպես էլ զմբեթարդի և տրոմպերի եզրագծերը շեշտված են կարմիր ներկով:

Նկատելի է, որ ժայռագաճափածի պարմերը, որոնց մեջ փորվել են վանական շինությունները, ունեն բավականին փուլոր հատկություն, ուստի ինչպես դրանց կայունացման, այնպես էլ որմնանկարելու կամ արձանագրություններ փորագրելու նպատակով բարվոր է համարվել վիմակերտ որմերը պատել սկաղի շերտով:


Իր մեծությամբ հաջորդ վիմակերտ շինությունը գտնվում է գլխավոր եկեղեցու հարավարևմտյան անվյան մոտ: Մատուռը գրեթե կրկնում է վերը նկարագրված եկեղեցու հորինվածքը, սակայն թե՛ շափերով է ավելի փոքր ( $4,78 \times 3,72$  մ) և թե՛ որպես քրիստոնեական պաշտամունքային կառույց՝ մանավանդ առանձնահատուկ է երկրի կողմերի նկատմամբ ունեցած դիրքով (ավանդական արևելք-արևմուտքի փոխարեն ունի հյուսիս-հարավ ձգվածություն, այսինքն՝ կիսաբոլորակ խորանը նայում է ոչ թե դեպի արևելք, այլ դեպի հյուսիս): Արևելքից բացված միակ մուտքով հաղորդակցվում է կից սրահի հետ, իսկ լուսավորությունն ապահովում է հարավից բացված միակ լուսամուտը: Մատուռը հարազատորեն կրկնում է նաև եկեղեցու հարդարանքը (ունի կարմիր ներկով պատված հավասարաքանի քանդակ զմբեթարդ քառակուսուց տրոմպային անցումով իրականացված կիսաբոլորակ զմբեթարդի կենտրոնում):

Ծարտարապետական յուրօրինակ լուծում ունի մատուռի և եկեղեցու միջանկյալ հատվածում գտնվող և միաժամանակ երկուսի համար էլ նախասրահ ծառայող կառույցը ( $3,98 \times 2,82$  մ), որն առանձնապես աչքի է ընկնում որմերի վերին հատվածների հատվող կիսակամարների վրա հառնած ուրանիստ ծածկով (նմանօրինակ լուծումը հանդիպում է հատկապես Թ-ԺԱ դարերի այլ հուշարձաններում ևս, ինչպես՝ Հռոմուսում և այլուր): Սրահի հատակը շարունակական քայլայման հետևանքով ներկայումս գրեթե խալառ ավերվել է (ապարներն արագորեն հողմահարվում են և ինչպես ավագ հոսում ներքեւ):


Ի դեպ, հետազոտող Շ. Սասանոն Ծառաքարի վանքի եկեղեցու և մատուռների զմբեթարդներին հավասարաքանի հերթի գոյությունը պայմանավորել է իր Զ դարում կապաղովկիացի հոգևորականների՝ դեպի Հայաստանի այս կողմերը տեղի ունեցած հնարավոր ներքափանցման և տեղում ծավալած գործունեության հետ և իրքն փաստարկ նշել. «Այս ենթադրությունն ավելի է հաստատվում այն հանգամանքով, որ այստեղ հայտնարվել է Կապաղովկիայում օգտագործված խաչի նույն ոճական առանձնահատկություն-



Կտրվածք Ա — Ա




Կտրվածք Բ — Բ




Կտրվածք Գ — Գ

0 1 2 3 4 5 10 մ  
Լուսակացնություն

Ծառաքարի վանքի եկեղեցու կտրվածքները դեպի արևելք, արևմուտք և հյուսիս (չափագրություններն ու գրաֆիկական մշակումը՝ ճարտ. Աշոտ Դակորյանի, 2010 թ.)




Ծառաշարի վանքի հարավարևմտյան մատուռի գմբեթարդը, ներքին տեսքը դեպի խորան (հյուսիս), հյուսիսարևմտյան տրոմպը և հարավարևմտյան ողմնամույրը




0 1 2 3 մ



Տեսարաններ Ծառաքարի վանքի հարավարևմտյան մատուռից



Ծառաքարի վանքի եկեղեցու և հարավարևմտյան անկյունում գտնվող մատուռի միջև զետեղված սրահը




Ծառաքարի վանք. լայնական կտրվածք դեպի հյուսիս (չափագրությունը՝ ճարտ. Աշոտ Չակորյամի, 2010 թ.)

ներով օժտված խաչ»<sup>29</sup>: Արտահայտված կարծիքը, սակայն, գտնում ենք միանգամայն անհիմն, քանի որ հավասարաբեր խաչաքանդակները լայնորեն տարածված էին Հայաստանի այլևայլ գավառներում և հանդիպում են քրիստոնեական պաշտամունքային վաղ շրջանի բազմաթիվ հուշարձաններում: Բացի այդ՝ Հայկական լեռնաշխարհում այդախիք երևան են եկեղեց ոչ թե Զ դարից հետո, այլ քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունման ժամանակից ի վեր:

Հաջորդ երկու մատուռները, որոնց կարելի է դիտարկել նաև որպես կենտրոնական կառույցի, այն է՝ եկեղեցու համար հյուսիսից բացված ավանդատների, իրենց հորինվածքով մոտ են նախորդ կառույցներին: Սրանք երկուսն ել եկեղեցու հետ հա-

ղորդակցվում են հարավից բացված մեկական մուտքերով: Լուսավորությունն իրականացվել է նույն կողմից բացված մեկական լուսամուտների միջոցով:



<sup>29</sup> Shiro Sasano & Sasano Seminar, նշվ. աշխ., էջ 128: Առհասարակ Ը. Սասանյի աշխատառթյունը հարուստ է անիրազեկության հիմքով ծնված բազմաթիվ արտառող լատոռություններով կամ եզրահանգումներով: Այս շարքից է նաև Ծառաքարի առիջիկ հայտնած այն տեսակետը, թե իր երկրամասում, որտեղ գտնվում էր վանքը, «վիմափոր եկեղեցին բավականին հազվադեպ հանդիպող երևուոր է», մինչդեռ ճշշու հակառակն է. թե՛ պաշտամունքային և թե՛ աշխարհիկ բազմաթիվ վիմափոր հուշարձաններով առանձնապես հարուստ են Հայաստանի հենց Արաքսի հովտին հարող և Ծառաքարի վանքին հարևանակից շրջանները՝ սկսած Զիվին բերդի վիմափոր կառույցներից (այդ թվում եկեղեցին) մինչև Սժնկերս քաղաքատեղի՝ շուրջ մեկ տասնյակ վիմափոր եկեղեցներն ու մատուռները, մինչև անգամ Կաղղվան գավառի Քերս գյուղի վիմափոր եկեղեցին:

Անհիմն է Սասանյի նաև այն պնդումը, թե «Պորտայի վանական համալիրը պետք է որ ավելի վաղ հիմնադրված լինի, քան Հայաստանի Հանրապետությունում մնացած մյուս վանականը» (նոյն տեղում):

Շարտարապետական-հորինվածքային և հարդարանքի առումով ավելի աչքի է ընկնում արևմտյան կողմի մատուռ-ավանդատունը, որն ունի  $3,37 \times 1,80$  մ չափեր: Խորանն աղոքարակից քարձը է 68 սմ, իսկ վիմակերտ սեղանը խորանի հատակից՝ 1,10 մ:


Գլեթե ամեն ինչով եկեղեցու և հարավարևմտյան մատուռի հորինվածքները կրկնող կառույցի կիսաբոլորակ գմբեթարդն այս դեպքում ողորկ է, չունի ծավալով առանձնացած և այդ կերպ



ընդգծված խաչաքանողակ: Լուծումը տրվել է պարզեցված տարբերակով, այն է՝ գմբեթարդը զարդարվել է ներկանկար հավասարաքանակ պարզ խաչապատկերով:

Արևելակողմի մատուռ-ավանդատունը, ճիշտ է, նախորդի համեմատ փոքր-ինչ ավելի ընդարձակ է ( $4,06 \times 2,21$  մ), սակայն ծածկի խնդրում ունի ավելի պարզ լուծումներ, մասնավորապես գմբեթատակ քառակուսոց անցումը գմբեթարդին այստեղ իրականացված է առանց տվյալ դեպքում, անշուշտ, դե-


կորատիվ՝ տրոմպային համակարգի: Նախորդի նման այստեղ ևս վեմ սեղանը ձուլված է մայր ժայռագանգվածին: Խորանի բարձրությունը աղոթարարի մակարդակից 82 ամ է, իսկ սեղանը խորանից բարձր է 1 մ: Աղոթարարի նույնիսկ վիմակերտ հատակը ենթարկվել է զանձախուզության, որի հետևանքով ներկայումս գոյացել է մի փոս:



Ծառաքարի վանք. հատվածներ եկեղեցու հյուսիսարևելյան կողմի մատուռ-ավանդատան ներքին ծավալներից



Ծառաքարի վաճքի եկեղեցու խորանից հարավ գտնվող մատուռ-ավանդատան առաստաղն ու արևմտյան որմը



Ծառաքարի վաճք. կարմիր ներկանկար հավասարաբն խաչի մնացող սպառի շերտի վրա

Համալիրի հաջորդ վիմակերտ հուշարձանը եկեղեցու խորանի հարավային կողմին մոտ տեղադրված մատուռն է, որը նախորդմերի նման ևս միաժամանակ կարելի է համարել նաև որպես եկեղեցու՝ բվով արդեն երրորդ ավանդատունը: Չափերով մոտ է նախորդ մատուռ-ավանդատներին ( $3,95 \times 1,99$  մ): Ունի հյուսիսից բացված դրու, որը տանում է ուղղակի դեպի եկեղեցու խորան, իսկ ներկայումս գրեթե խսպառ քայլայված հարավային մուտքի միջոցով ապահովվում է հաղորդակցությունը սոորդեստնյա մի հոր ունեցող միջանկյալ փոքրիկ սրահով եկեղեցու կամ հարավարևմտյան մատուռի հորինվածքն ավելի փոքր չափերով կրկնած հերթական, այն է՝ մեծ մասամբ դարավոր հողմահարության հետևանքով արդեն քայլայված վեցերորդ մատուռի հետ:

Ընդհանուր հատկանիշներով նախորդ հորինվածքները կրկնում են նաև համալիրի ծայրաբնելյան կողմում փոքր-ինչ առանձնակի դիրք ունեցող յոթերորդ մատուռը, որն ունի  $3,16 \times 2,42$  մ չափերը: Վերջինս հատակագծում կիսաշրջան խորանի մեջ նույնական ունի մայր ժայռին ձուլված սեղանի վեմքար, իսկ աղոթարանի վերևում՝ պարզ հորինվածքով կիսաբոլորակ գմբեթարդ, այս դեպքում առանց խաչի պատկերի: Այս մատուռը ներքուստ նույնական սպառված է եղել, որի խորանի կորության մեջ պահ-



**Ծառաքարի վաճքի արևելյան եզրին գտնվող մատուռի խորանը**

պանվել է ԺԹ դարավերջին բողնված մի ուխտավոր այցելու հիշատակագրություն:

Վաճքի ներկայացված հիմնական կառույցներից փոքր-ինչ հեռու՝ ժայռապարի արևմտահայաց ստորոտին՝ հատակի մակարդակով բնահողին հավասար դիրքում կիսաբնական անձավի մեջ փորված է համեմատաբար մեծ, սակայն անկանոն հատակագծով մի սրահ, որն ունի հազիկ 2-2,5 մ բարձրություն: Առաստաղին դարձյալ առկա է հավասարակի խաչի քանդակով հարդարված կիսաբողորդակմբեթարդ: Ի տարրերություն մնացած կառույց-

**Ծառաքարի վաճքի հյուսիսարևմտյան կողմում գտնվող անձավսրահի ներքին տեսքը և գմբեթարդը**

ների՝ սա միակ վիմափոր շինությունն է, որ շրջապատի նկատմամբ ունի ազատ հաղորդակցություն և մատչելի է դեպի անձավի հովլ ձգտող ընտանի կենդանիներին: Անձավսրահի ներսում նշմարկում է աստծոց ողորմություն հայող անանուն հեղինակի երկտող հիշատակագրությունը:

Ներկայացնելով Ժ դարի կեսերին սկզբնավորված և հետագա մի քանի դարերում աշխույժ մշակութային կյանքով ապրած Ծառաքարի վաճքին նվիրված սույն հակիրճ տեղեկությունները՝ ցանկանում ենք շեշտել, որ վաճքի ճարտարապետական-հորինվածքային, ինչպես նաև մի շարք առումներով որոշակի նորույթ պարունակող գեղարվեստական լուծումներով առանձնահատկություններն են ավելի դյուրմբոնելի և բացատրելի կարող են լինել, եթե ուսումնասիրողներին հնարավորությունը ընձեռվի Ծառաքարի վաճքը դիտարկել և արժելորել մերձակա բազմաթիվ այլ հնավայրերում պահպանված վիմափոր տասնյակ հուշարձանների ընդհանուր քննության հիմքի վրա:

Նման ուսումնասիրություն էլ հուսով ենք մասնագետների ուշադրությանն արժանացնել հաջորդիվ:



Այցելություն Ծառաքարի վանք 2010 թ.

## ԶԱՐԵՔՏԱՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԼԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան

Զարեքտարի վանքը գտնվում է Արցախի Վերին Խաչեն գավառում՝ Տրտու գետի աջափնյա բլրի գագաթին (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջան, գյուղ Զարեքտար):



**Զարեքտարի վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից**

Սատենագրական աղբյուրներում վանքի մասին տեղեկությունները սակավարի են: Պատմական վկայությունների համար հիմնականում աղբյուր են ծառայում տեղում պահպանված վիմագրերը, որոնք, սկսած 19-րդ դարից, առ այսօր հրատարակվել և ուսումնասիրվել են Ս. Զալալյանցի, Մ. Բարխուտարյանցի, Մ. Տեր-Մովսիսյանի, Հ. Ռույանի, Ս. Բարխուտարյանի, Շ. Սկրտչյանի կողմից: Ցավոք, վիմագրերի որոշ մասը Խորհրդային Աղքա-քանի իշխանության տարիներին անհետացել է:

Վանքի հիմնադրման շարժառիթների, ժամանակի և անվան մասին մինչ օրս ոչինչ հայտնի չեն: Ժամանակին տեղում պահպանված գեղեցիկ մի-

խաչքարի արձանագրության վերծանումից Ս. Զալալյանցը կարծել է, թե վանքի անունը Մշահան<sup>1</sup> է (այնուհետև նրան կրկնել է Մ. Բարխուտարյանցը): Հետագայում Մ. Տեր-Մովսիսյանը<sup>2</sup> և Ս. Բարխուտարյանը<sup>3</sup> ժխտում են Զալալյանցի հորինած անունը, որն արդյունք էր արձանագրության սխալ ընթերցման: Այժմ այդ խաչքարը տեղում չէ: Միայն մի փոքր բեկոր՝ արձանագրության մի մա-



սով, գտնվում է գավթի հիմքերի վրա կառուցված անասնագոմի պատի շարվածքի մեջ: Ներկայում կորած մեկ ուրիշ արձանագրությունից, որ նույնպես չենք գտել, հասկացվում է, որ վանքի եկեղեցին անվանվել է Մք. Աստվածածին<sup>4</sup>:

ԺԹ դարում և Խ դարի սկզբին վանքի կալվածքները Դադի (Խորավանք) վանքի կալվածքների հետ միասին գտնվել են Էջմիածնի Ենթակայության ներքո և պաշտոնական գրություններում հիշատակվել Խորավանք կամ Զարեքդար վանք անունով<sup>5</sup>: Դադի վանքի հետ միասին որպես կալվածքի անուն հիշատակվելը, այն էլ «խոշորագոյն կալված», Զարեքտարի վանքի համար նշանակում էր մեծ դերակատարում տարածաշրջանի հոգևոր կյանքում: Խորհրդային շրջանում Զարեքտար գյուղը վերջնականապես հայաբափվում է: Այնտեղ

<sup>1</sup> **Զալալյանց Ս.**, ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 228:

<sup>2</sup> **Տեր-Մովսիսյան Մ.**, Հայկական երեք մեծ վանքերի Տարեի, Հաղածնի և Դադի Եկեղեցիները և վանական շինութիւնները, Երևանին, 1938, էջ 98:

<sup>3</sup> Դիման հայ վիմագրության, պրակ 5, կազմող **Բարխուտարյան Ս.**, Երևան, 1982, էջ 132:

<sup>4</sup> **Զալալյանց Ս.**, նշվ. աշխ. էջ 229: Դիման, պրակ 5, էջ 134: Տես նաև Ռույան Հ., Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 113:

<sup>5</sup> **Տեր-Մովսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 83, 97:



Չարեքտարի վանքի ընդհանուր տեսքը հարավից


բնակություն են հաստատում աղբքեզանցիները: Վանքը բնականաբար գործող չէր և գտնվում էր աղբքեզանական իշխանությունների ենթակայության տակ՝ կրելով դրանից բխող ծանր հետևանքները (դանաշաղ և միտումնավոր ոչնչացում): Գրեքե բոլոր խաչքարերը կոստրվել և օգտագործվել են որպես շինանյութ այլ շինությունների կառուցման համար, իսկ վանքի կառույցները ձևափոխվել և դարձել են անասնագոմեր:

Արցախի ազատագրումից հետո հնարավոր է դառնում վանքի վերականգնումը, ինչին և ձեռնամուխ է լինում L24 կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչությունը: Վերականգնման նախագիծը գիտականորեն կազմելու նպատակով առաջնահերթ անհրաժեշտ էր կատարել պեղման աշխատանքներ, որոնք իրականացվում են 2009 թ. հունիսի 13-23-ն ընթացական արշավախմբի ղեկավարն էր հնագետ Գագիկ Սարգսյանը, ճարտարապետը՝ վանքի վերականգնման նախագծի հեղինակ ՍամՎել Այվազյանը:

Անհրաժեշտ էր պեղել, մաքրել համալիրի տարածքը՝ նախապատրաստելով այն չափազման ու վերականգնման նախագծի համար: Հարկավոր էր ճշտել, թե արդյոք հուշարձանը եղել է պարսպապատով պաշտպանված վանք-ամրոց, թե՞ ոչ, պարզել պահպանված շինությունների գործառական նշանակությունը, նրանց կառուցման հաջոր-

դականությունն ու ժամանակագրությունը, յուրաքանչյուրի կրած վերակառուցումների քանակն ու ժավալը:

Պեղումների ընթացքում պարզ է դառնում, որ համալիրի հիմնական հուշարձանախումբը, որը տեղադրված է գյուղի վրա իշխող կոնաձև բլրի գագաթին, բաղկացած է եղել.



Ա. գլխավոր եկեղեցոց, որն իր ճարտարապետական հորինվածքով և շինարարական տեխնիկայով ու նյութերով մոտ է ԺԲ-ԺԳ դարերի կառույցներին: Եկեղեցին ունի բազիլիկի հորինվածք, ընդ որում, խորանի լայնությունը հավասար է սրահի լայնությանը, այսինքն՝ ուղղանկյուն սրահ է, որը

մեկ զույգ փոքրիկ (24 սմ) որմնասյուներով բաժանված է երկու մասի: Արևելյան համեմատաբար փոքր մասը ծառայում է որպես խորան, որն աղոթարարի մակարդակից բարձր է 96 սմ: Եկեղեցին եղել է բաղաձածկ և ունեցել է կղմինդրե տաճիք (փաստարկները ստորև), որոնք այժմ բացակայում են:

Բ. զավթից, որից պահպանվել է միայն հիմնապատերի կեսը:

Գ. Եկեղեցուն հարավից կցված փոքր եկեղեցուց կամ մատուռից, որը նույնությամբ կրկնում է եկեղեցու հորինվածքը, միայն ավելի փոքր չափերով: Բարեբախտաբար, այստեղ պահպանվել է բաղաձածկ և կղմինդրե տաճիքի մի հատվածը: Կղմինդրների չափերը և ձևը նույնական են Դադի վանքում և Հանդարերդում գտնված կղմինդրների հետ, ինչը փաստում է միևնույն ժամանակաշրջանում (ԺԲ-ԺԳ դարեր) կառուցված լինելը:

Դ. զույգ աշտարակներով պարապից, որը կից է զավթին հյուսիսից:

Ե. սրահից, որ կից է զավթին հարավից:

Զ. ևս մի մատուռից՝ եկեղեցուն կից հյուսիսից:

ԺԹ դարի կեսին վաճճը այցելած Ս. Զավալյանցը վաճճի կառույցների մասին նշել է. «Ի մեջ որմոյ գարդին շինեալ կայ շիրմաձև մատուռն և հանդեպ նորին խաչքար մեծավիր ...կից սորա զոն այլ ևս մատուռնք, սեղանոր սրբութեանց, բայց զլխովին աւերակը, շուրջ զորովք կուտակեալը կամ դերուք բարանց զուցէ տեղիք սենեկաց միաբանից»<sup>6</sup>:

Ս. Տէր-Մովսիսեանը նշել է. «Զարեքդար վաճճը բաղկացած չորս փոքր մատուռներից, միմեանց կպած»<sup>7</sup>: Այնուհետև ներկայացնելով վիմագրերը՝ օգտագործում է նաև եկեղեցի բառը: Ակնառու է, որ վաճճի բոլոր կառույցները մատուռներ կամ եկեղեցի չեն, կամ նաև այ նշանակության շինուրյուններ:

1960-ական թթ. սկզբներին նշվել է. «վաճճի շինուրյունները կիսավեր են. կանգնած են իրար կից չորս շենքեր՝ եկեղեցի, զավթի, տապանատուն, և մատուռ՝ անտաշ քարերով շինված»<sup>8</sup>: Տապանատունը, ըստ երևոյթին, մեր կողմից նշված սրահն է, իսկ զավթի հավանաբար ինչ-որ չափով պահպանված է եղել: Ներկայունս մնացել են միայն զավթի արևմտյան պատի հիմքերը և պեղումներից հայտնաբերված հյուսիսային հիմնապատու:

Պեղումների ընթացքում հիմնական հուշարձանախմբի հարավային կողմի բակում բացվեցին ժայռին հպված ինչ-որ ուղղանկյուն շինուրյան հետքեր, իսկ նույն բակում՝ վաճական գերեզմանոց տապանաբարերով:

Համալիրը արևելյան կողմից ամրացված է եղել բրի լանջն ի վեր բարձրացող բազմաստիճան հե-



Զարեքտարի վաճճի պեղումների ժամանակ հուշարձանախմբի հարավային կողմում բացված ուղղանկյուն շինուրյան մնացորդները և գերեզմանոցը

նապատերի համակարգով, որոնցով արհեստականորեն լայնացված է եղել բրի զավթի հրապարակի օգտակար տարածությունը:

Հրապարակի հարավարևելյան հատվածում, ըստ ամենայնի, եղել են կենցաղային ու տնտեսական ինչ-որ շինություններ, որոնցից պահպանվել են հոր-շտեմարանը և կորավուն շինության հետքերը: Հենապատերի կործանման և Խ դարսմ գյուղում նստակեցության անցած խաշնարած բնակիչների ծավալած շինգործունեության հետևանքով, սակայն, այս հատվածի պատմական միջավայրը հիմնվին աղավաղվել է. Կառուցվել են բնակելի ու տնտեսական շենքեր, անասնագործներ:



Վաճճն իր աղավաղված պատմական միջավայրով

<sup>6</sup> Զալաբեանց Ս., նույն տեղում:

<sup>7</sup> Տէր-Մովսիսեան Ս., նշվ. աշխ., էջ 98:

<sup>8</sup> Դիվան հայ վիմագրության, նույն տեղում:



Կրաշաղախով հարթեցված եկեղեցու հատակը

Պեղման աշխատանքները սկսվեցին կառույց-ների ներսը մաքրելուց: Պարզվեց, որ եկեղեցու հատակը հարթեցված էր կրաշաղախով: Մյուս կառույցների հատակները չեն պահպանվել:

Եկեղեցու արևմտյան ճակատին կից կառուցված անասնագոմի հյուսիսային պատ հանդիսացող գույզ աշտարակներով պարսպի ներսի մակերևույթի զննությունը ցույց տվեց, որ պատի ներսի շերտի շարվածքը ոչ թե ընդունված պարզ շարվածք է, ինչպես նույն պարսպի դրսի մակերևույթը, այլ շարվածքի քարերը և լիցքն իրականացվել են՝ հպվելով կաղապարամած ծառայող ինչ-որ մակերևույթի: Սրանից հետևում է, որ պարիսպը կցվել է մի այլ պատի: Դա պարզելու համար գոմի հատակի



Եկեղեցուն կից անասնագոմի հյուսիսային պատը մերժուստ

մակարդակը պարսպի մոտ իջեցվեց, և հայտնաբերվեց պատի շարվածքի ստորին շարքը: Քանի որ գոմի արևմտյան պատն էլ շարված էր ավելի վաղ կառույցի հաստ հիմնապատի վրա, պարզ դարձավ, որ այստեղ՝ եկեղեցու արևմտյան կողմում, եղել է կառույց, որը կարող էր լինել կամ գավիթ, ինչ-



Պեղումներից հայտնաբերված հաստ հիմնապատը

պես ընդունված էր միջնադարյան վանական համալիրների ծավալատարածական հորինվածքներում, կամ պարսպապատ (նկատի ունենք ոչ ներկայիս գույզ աշտարակներով պարիսպը): Կարծում ենք, որ այդ կառույցը գավիթ է (Զալայյանցի և «Դիվան»-ի հեղինակների նկարագրածը), որից պահպանվել են միայն հյուսիսային, արևմտյան հիմնապատները և հարավային պատի, որ կառուցված է եղել գոմի ներսում երևացող ժայռահիմքի վրա, պեղումներով հայտնաբերված արևմտակողման 178 սմ երկարությամբ փոքրիկ մի հիմնամաս:

Պարիսպն իր երկու աշտարակներով հետագայում կցակառուցվել է գավիթի պատին, ըստ երևույթին, ամրացնելու նպատակով:

Համալիրի հյուսիսային մասում հողը հեռացնելուց հետո պարզվեց, որ պարիսպը շարունակություն չի ունեցել, այն ընդգրկել է միայն ներկայումս կործանված գավիթի հյուսիսային պատը: Այստեղ՝ եկեղեցու հյուսիսային պատին և պարսպի արևելյան աշտարակին կից, բացեց ուղղանկյուն փոքրիկ կառույց, ամենայն հավանականությամբ, մատուռ-աղոթքարան, որը եղել է քաղակապ, որովհետև կառույցի ներսը լցված էր փլված քաղի կտորներով: Մատուռը պահպանվել է 2-3 շարքի բարձրությամբ



Եկեղեցու հյուսիսային կողմում բացված մատուռի մնացորդները

և ունի արևմտյան կողմից մուտք դեպի գավիթ: Հետագայում այս կառույցի արևելյան կողմում (կործանումից հետո) կառուցվել են աստիճաններ, որոնք տանում են դեպի անասնագոմի ձեղնահարկ: Աստիճաններից պահպանվել են չնչին հատվածներ:

Համալիրի հարավային կողմի հողը հեռացնելուց հետո բացվեց 2-3 շարով պահպանված ուղղանկյուն կառույց, որի արևելյան և արևմտյան պատերը հարավային կողմում հանդիպում են ժայռազանգվածին, և դրանից հետո որևէ պատի հետք չի նկատվում: Փաստորեն կառույցի հարավային պատը հիմնովին կործանվել է:



Դուշարձանախմբի հարավային կողմը պեղումներից հետո

Առաջին տապանաքարի կոտրված վերին արձանագիրը բեկորը, որի վրա էր գրության մեծ նասը, գտնվեց և վերատեղադրվեց իր տեղում: Քառատող արձանագրության ամբողջական վերծանությունն է.

Այս է հանգիստ Հատեփի/անոսի քահ/անայի:



Ստեփանոս քահանայի տապանագիրը

Ուղղանկյուն կառույցի և սյունասրահի միջև ընկած տարածքում բացվեցին իրենց տեղերում պահպանված չորս տապանաքարեր: Դա վկայում է, որ այստեղ եղել է վանական գերեզմանոց: Հայտնաբերված չորս տապանաքարերից երկուսն արձանագիր էր՝ կողը կողքի տեղադրված ուղղանկյուն կառույցի հյուսիսային պատի տակ:



Պեղումներից հետո գերեզմանոցում հայտնաբերված արձանագիրը գույզ տապանաքարերը

Այս տապանաքարը միտումնավոր կոտրված է եղել: Դա է վկայում այն հանգամանքը, որ տապանի գլխամասի տեղում ժամանակին՝ հավանաբար գոմը կառուցելիս, կիր են շաղախել (կրի մնացորդները պարզ նկատվում էին տապանի վրա):

Երկրորդ արձանագիր տապանաքարին 7 տոնով փորագրված է.



Պեղումներից հետո գերեզմանոցում հայտնաբերված արձանագիրը գույզ տապանաքարերից մեկը

*Այս է հանգիս/տ Պետրոսի ե/լրայր տ(եառն) Սյարգարէին եւ / Առաքելա, ա(սոռուա)ծ / ողորմի սմա, ամ/են:*

Մյուս երկու անարձանագիր տապաններից մեկը տեղադրված էր ուղղանկյուն կառույցի հյուսիսարևելյան անկյան մոտ, մյուսը՝ սյունասրահի հարավային պատի տակ՝ կենտրոնական մասում:

Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին տեղահան այլ տապանաքարեր ևս: Նրանցից մեկը կոտրատված էր: Գտնվեցին միայն երկու բեկորները, ընդ որում, կոտրներից մեկն օգտագործվել էր որպես գոմի փայտյա սյան խարիսխ: Քառատող



**Տապանաքարի արձանագիր բեկորը՝ գործածված որպես գոմի փայտե սյան խարիսխ**

արձանագրության մյուս մասը վերին ձախ անկյան կորած բեկորի (բեկորների) վրա էր.

*[Այս է] տապա//[ն Յոհանիսի որ/[դի] ...արտի ե/ի Խարթումին:*



**Տապանաքարի հայտնաբերված երկու բեկորները միավորելուց հետո**

Մեկ այլ տապանաքարի ստորին կեսը, որի վերին արձանագրված մասը հայտնի էր<sup>9</sup>, օգտագործվել էր վաճքի սյունասրահը կառուցելիս և ազուցվել հարավային պատի մեջ: Ավելի ուշ այդտեղից էլ պոկվել և ընկել էր: Երկու մասերը միացվեցին մեր կողմից:

Մեկ այլ տապանաքարի վերին արձանագրված մասը ևս հայտնի էր<sup>10</sup>, իսկ ներքին կոտրված մասը չհայտնաբերվեց: Բոլոր բեկորները, որոնք իրենց տեղում չէին, հավաքվեցին, կոտրված մասե-



**Տապանաքարի միացված երկու բեկորները**

<sup>9</sup> Վերծանոթյունը տե՛ս Դիվան հայ վիմագրության, էջ 135, № 453ր:

<sup>10</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 135, № 453ա:

րը միացվեցին և տեղադրվեցին սյունասրահի հարավային մասում գտնված Ստեփանոս, Սարգարե և Առաքել քահանաների տապանաքարերի կողքին:

Պեղումներից, համալիրի տարածքից և մոտակա բնակելի տների ավերակներից գտնվեցին ինչպես ամրողական, այնպես էլ բեկորված խաչքարեր, որոնց մի մասի վրա կային արձանագրություններ: Խաչքարերը հորինվածքով և քանդակների ոճական առանձնահատկություններով թվագրվում են ԺԲ-ԺԴ դարերով: Արձանագրություններն են՝

**Ա.** գեղարվանդակ խաչքար սպիտակ մարմարից. կոտրված է երկու մասի: Գտնվել է վանքից հեռու՝ բնակելի տներից մեկի բակում: 12 տողով արձանագրությունը փորագրված է խաչքարի թիկունքին.

Կաման ա(սոտուն) ես / Մխիթար Փուրսկարդի / որդի անուանի խաչգործ կանգնեցի զ/ս(ուր)ք Գրիգոր ի քարեխաւ/սուրի(ւն) հոգոյ իմո, / որք քարենոյք լի / թերանով ասացէք / Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ողորմի Մխիթարայ եւ իր ծմ/ողացն, ամէն, / ՈՉԹ (1240) էր թիւն:



Անվանի խաչգործ Մխիթարի կանգնեցրած խաչքարը (1240 թ.)

Բացի գեղարվեստական արժեքից՝ խաչքարն առանձնահատուկ է կերտողի անվան և մանավանդ նրա մասնագիտության (խաչգործ) հիշատակությամբ:

**Բ.** հյուսիսային եզրից ամբողջ երկարությամբ փշրված գեղարվանդակ խաչքար. գտնվել է համալիրի հարավարևմտյան կողմի բնակելի տան փլատակներից: Վերին խաչքարն էրկու կողմերում և հարավային նեղ կողին (միասին՝ առնվազն 9 տող) փորագրված է.

ՋԼԹ (1290), / ...ս... / ...[կ]անգ/[մե]ցի զիսա/չս ծմող/աց իմ եւ եղարց իմ, / յիշեցէք ի Ք(րիստո)ս:

**Գ.** փոքր խաչքարի վերնամաս՝ հայտնաբերված նույն փլատակներից. հյուսիսային նեղ կողին



Անվանի խաչգործ Մխիթարի կանգնեցրած խաչքարը (1240 թ.)



պահպանվել է բազմատող արձանագրության սկզբնամասը (5 տող):

Ա(ստուա)ծ / ող/որմ/ի Խո/ցադ(եղա)....:

**Դ.** փոքր խաչքար. ստորին հատվածում՝ 6 տող.

Ես Գրգորիկ / արկի զիզին, / տվի Սարգիս/այ տարին Ա (1) ալ/ր ժամ, ով / ...

**Ե.** երեսապատի սրբատաշ մարմարե քար. 5 տող.

Ա(ստուծո)վ, ես՝ Փոքրիկ միաբանեցա ս(ուր)ք ովստիս, Յոհանես/ս եւ եղարքս ետում :Բ: (2) / ալր ժամ ս(ուր)ք Գրիգորի, ով / Խափան դատի յա(ստուծո):

**Զ.** խաչքարի բեկոր. թիկունքին եղած արձանագրությունից լնիքերցվում է.

Թ(վիմ) ՈԾԷ (1208), (կամաւա) / ա(ստուծո) ես Հա... / արեղես կա(ն)զ/եցի զս(ուր)ք յաղ... / ...ս...:

**Է.** խաչքարի բեկոր. պահպանվել է ստորին ձախ մասը՝ արձանագրության սկզբնամասով (5 տող):

Թվ(իմ) / ՆԾՍ (1002), / ի ժա/ման/ակս...



Այգի հիմնած Գրգորիկի խաչքարը (արձանագրություն Դ)



Ոմն աբեղայի 1208 թ. կամզմեցրած խաչքարի բեկոր (արձանագրություն Զ)



Միաբան Փոքրիկի նվիրատվական հիշատակագրությունը (արձանագրություն Ե)

Վանքի տարածքում և պատերի մեջ ժամանակին եղել են նաև ուրիշ վիմագրեր ու խաչքարեր<sup>11</sup>, որոնք այժմ աճինտացված են:

Չարունակելով պեղման աշխատանքները՝ եկեղեցու և մատուռի (փոքր եկեղեցու) կցման հատվածում տանիքը մաքրելիս հայտնաբերվեց իր տեղում պահպանված մատուռի կղմինդրածածկից մի հատված, որը փաստում է մատուռի կղմինդրա-



1002 թ. կերտված խաչքարի բեկոր (արձանագրություն Է)

<sup>11</sup> Դիվան..., պլակ 5, էջ 132-135:



**Պեղումների ընթացքում հայտնաբերված կղմինդրի մնացորդները և նմուշները**

պատ ծածկ ունենալը: Վերջինիս վրա խառնիխուռն քափված էր կոտրտված կղմինդրների շերտ: Այն ցույց է տալիս, որ մատուի տանիքին քափվել են մեկ ուրիշ, ավելի բարձր կառույցի վիզածքի կղմինդրներ, իսկ դա կարող էր լինել միայն մատուռին կից եկեղեցին, այսինքն՝ եկեղեցին նույնպես ինչ-որ ժամանակ կղմինդրածածկ է եղել, իսկ այժմ քացակայում են ներսի ծածկը և տանիքի ծածկանյութը:

Մատուի կղմինդրե տանիքը կառուցված է եղել միջնադարի դասական կղմինդրածածկի սկզբունքով. դրվել են սեղանածև կողավոր հարք կղմինդրները, իսկ նրանց կարանները ծածկվել են կիսակլոր ելուստավոր կղմինդրներով: Եկեղեցու և մատուի կցման մասում ջրահեռացումը կատարվել է սեղանածև հարք կղմինդրներով պատրաստված և դեպի արևելք թեքություն ունեցող առվակի միջոցով:

Պեղման աշխատանքների ընթացքում հեռացվեց նաև գավթի և սրահի տեղում սարքված անասնագոմի՝ փայտից և ազրոշիթերից պատրաստված և այժմ արդեն քայլայված ծածկը:

Պեղման և ճարտարապետական հետազոտական աշխատանքների համարումից և պատմական հայտնի տեղեկությունների ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

Ա. Առնվազն ԺԱ դարի սկզբում վանքի տարածքը արդեն օգտագործվում էր պաշտամունքային

նպատակների համար, ինչը վկայում է 1002 թ.-ից մեզ հասած խաչքարի բեկորը:

Բ. Աշխարհիկ և հոգևոր առաջնորդների տապանաքարերի, բազմաթիվ գեղաքանդակ խաչքարների գոյությունը, ինչպես նաև Դադի վանքի հետ ԺԹ-Ի դարերում որպես կալվածքի անուն հիշատակվելով վկայում են, որ վանքը, չնայած կառույցների փոքր ժավամներին, միջնադարում Արցախի հոգևոր և հասարարական կյանքում նշանակալի դերակատարում է ունեցել:

Գ. Հյուսիսային կողմում գտնվող պարիսպն իր երկու աշտարակներով հենց այդքանով էլ սահմանափակվել է և շարունակություն չի ունեցել, այսինքն՝ համալիրը պարսպապատով փակված վանքամբոց չի եղել:

Դ. Հյուսիսային և հարավային կողմերում հայտնաբերված ուղղանկյուն կառույցներից առաջինը թերևս կարելի է համարել մատու, իսկ հարավայինի գործառական նշանակությունը պարզաբանել շահօդվեց:

Ե. Տարածքում Ի դարում հաստատված մահմեդականների բնակելի շինություններից պատերից և հողաշերտի տակից հայտնաբերվեցին վերը նկարագրված տապանաքարերը և խաչքարերը:

Համալիրի կառուցապատման ժամանակագրական հաջորդականության վերաբերյալ կարելի է նշել հետևյալը.

Պահպանված հնագույն կառույցը ԺԲ-ԺԳ դարերում կառուցված ուղղանկյուն խորանով եկեղեցին է, որին այնուհետև արևմուտքից կցվել է գավիթը (ներկայումս պահպանվել են միայն հյուսիսային և արևմտյան պատերի հիմքերը և հարավային պատի հիմքի մի փոքր մասը): Հաջորդ, այն է՝ Յ-րդ փուլում կառուցվել է փոքր եկեղեցին (մատուը՝ կցված եկեղեցու հարավային պատի արևմտյան հատվածին, ընդ որում, կառուցվել է այն ժամանակ, երբ գավիթը արդեն քավական վնասված էր: Այս կարծիքն ենք հայտնում՝ մանրագնին հետազոտելով մատուի արևմտյան պատը, որի ստորին հատ-



**Եկեղեցու հարավային ճակատի արևմտյան հատվածին կցված մատուը**

վածի մակերևույթը մոտ 250 սմ բարձրությամբ ունի նույն կառուցվածքը, ինչ վերը նկարագրված պարսպի ներսի մակերևույթին է, այսինքն՝ կցակառուցվել է այդ մասում գոյուրյուն ունեցող գավրի պատին, իսկ նշված բարձրությունից վերև շարվածքը նմանվում է պարզ պահանջականին, ինչպես մյուս պատերինն է: Հետևաբար մատուի արևմտյան պատը ստորին հատվածով կցակառուցվել է գավրի պատին, իսկ վերին հատվածով կառուցվել է որպես ազատ պատ, որովհետո այդ մակարդակից վերև գավրի պատն այլևս գոյուրյուն չի ունեցել:

Հաջորդ փուլում, որը կարող էր համընկնել փոքր եկեղեցու (մատուի) կառուցման ժամանակաշրջանի հետ, կառուցվում է հյուսիսային պարիսպը երկու աշտարակներով և հավանաբար ամրացման նպատակով կցվում գավրի հյուսիսային պատին արտաքուստ (քանի որ, ինչպես արդեն նշել ենք, գավրի պատերն այդ ժամանակ արդեն վնասված կամ քանդված էին): Այս կառուցումները կարող էին իրականացված լինել ԺԴ-ԺԴ դարերում:

Հերթական փուլում կառուցվում է թաղակապ ծածկով սրահը, որի հյուսիսային պատը, կցված լինելով գավրի հարավային ճակատին, հետազոտում վերջին հետ միասին հիմնահատակ քանդվում է մահմետական բնակչության կողմից՝ տեղում գոյն կառուցելու նպատակով, իսկ մյուս պատերն էլ ձևափոխվում են: Սյունասրահի հարավային պատն ունեցել է երկու լայն բացվածք՝ պլաքածն վերջացնող կամարներով: Արևելակողմյան բացվածքի մեջ ուղղանկյուն մուտք է շարվել, իսկ արևմտակողմյանում՝ պատուհան: Այս կառույցի կրաշաղախը գոյնով, թաղադրությամբ և ամրությամբ ակնառու տարրերվում է մյուսներից (դեղնավուն է, հավանաբար կավի խառնուրով և նկատելի նվազ ամրությամբ), և կարող էր կառուցվել ԺԷ դարում կամ նոյնիսկ դրանից հետո:

Վերջին փուլն արդեն վերաբերում է Ի Դ դարին, երբ նախկին գավրի և սյունասրահի պատերն օգտագործելով՝ ներսում փայտե սյուների վրա ազրո-



Վերակառուցումների հետքեր եկեղեցու ճակտոնին

շիֆերի ծածկով ավելի բարակ պատերով կառուցվել է անասնագոռ:

Եկեղեցին իր հերթին ունեցել է վերակառուցումներ, որնց հետքերն ակնառու են թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ: Ուստինասիրելով այդ հետքերը և հաշվի առնելով հայտնաբերված կղմինդրները՝ գալիս ենք այն համոզման, որ եկեղեցին իր սկզբնական տեսքով եղել է թաղակապ և պատված կղմինդրածածկով, ինչպիսին որ փոքր եկեղեցին կամ մատուն է:

Գավրի և փոքր եկեղեցու (մատուի) կառուցումից հետո, ըստ երևույթին, արդեն սյունասրահի կառուցման ժամանակ, եկեղեցու թաղը փոխարինվում է փայտածածկով: Ներքուստ եկեղեցին սվաղվում է: Ի դեպք, սվաղի վրա պահպանվել է փորագիր կլոր փարպյակներից կազմված և կապույտ ու կարմիր ներկի հետքեր պարունակող զարդագոտի, որը շրջագծում է եկեղեցու ներսի ողջ տարածքը՝ անցնելով մուտքի ու արևելյան պատուհանի վրայով:

Պեղման աշխատանքների ավարտից հետո կատարելով վերլուծություններ, այնուհետև ճարտարապետական հետազոտություններ ու եզրակացություններ՝ կազմվել են համալիրի եկեղեցու ու մատունի ամբողջական և մյուս կառույցների մասնակի վերականգնման և ամրակայման նախագծերը:



Սյունասրահի հարավային պատը



Սվաղի շերտին պահպանված զարդերի մնացորդներ

## ՔԵՍԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1906-2006 ԹԹ.

### Բաֆֆի Քորթոշյան

Քեսաքի շրջանը ներկայում գտնվում է Սիրիա-ի Արաբական Հանրապետության հյուսիսարևմտյան ծայրամասում՝ Լաբարիա նահանգի սահմաններում:

Շրջանը բաղկացած է Քեսաք շրջկենտրոնից և 11 հայաբնակ գյուղերից՝ Գարատուրան, Գարատաշ, Սև Աղբյուր, Ներքին գյուղ, Ջինար, Զաքազըր, Քորդյունե, Էրիզոլոք, Տյուզաղաջ, Վերի Պաղցաղազ և Վարի Պաղցաղազ:

Շրջանը զբաղեցնում է մոտ 90 քառ. կմ մակերես<sup>1</sup>: Հյուսիս-արևմուտքից սահմանակից է Մուսելեկ քուրքարնակ գյուղին և Սիջերկրական ծովին (նաև արևմուտքից), հյուսիսից՝ Կասիոս և Պալլում լեռներին, հյուսիս-արևելքից՝ Բեզեկու քուրքարնակ գյուղին, արևելքից՝ Օրտու քուրքարնակ շրջկենտրոնին, հարավից՝ Լըլջոյրի հովտին և այլտեղից մինչև Ֆագա-Հասան երկարող ձորը, հարավ-արևմուտքից՝ Ֆագա-Հասան, Հյուրմերի և Պետրոսին քուրքմենարնակ գյուղերին:

Շրջանի ամենաբարձր գագարը Կասիոս լեռն է (1750 մ), ապա Պալլում լեռը (1250 մ)<sup>2</sup>: Հայտնի են նաև Սելտրանը (1129 մ)<sup>3</sup>, Տունակը (838 մ): Զկան մշտահոս գետեր կամ գետակներ: Ոչ մշտահոս են Մեղրածորի և Տյուզաղաջի վտակները:

Գավառի բոլոր գյուղերն ունեն մշտահոս աղբյուրներ՝ բացի Պաշորս գյուղից: Ամենաջրառատը Ջինար գյուղի աղբյուրն է:

Շրջանի հարավային, հարավարևմտյան և հարավարևելյան մասերը ծածկված են հիմնականում եղևնու անտառներով, իսկ հյուսիսային, հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան մասերը՝ ավելի շատ կաղնու և դափնու ծառերով:

Ի դարի սկզբին և մինչև Օսմանյան կայսրության անկումը շրջանը մաս էր կազմում Օրտուի նահիենին, որն իր հերթին ենթակա էր Հալեպի կուսակալության Հքուր-Շըլուր կազային: Բացառություն էին կազմում Վերի և Վարի Պաղցաղազ գյուղերը, որոնք մտնում էին Դամասկոսի կուսակալության մեջ և պատկանում Լաբարիայի մութասարդիքությանը<sup>4</sup>:

1919 թ.՝ ֆրանսիացիների կառավարության շրջանում, Քեսաքը՝ իրքև առանձին նահիեն, միացվում է Անտիոքի կազային: Նահիեն ենթակա էին

շրջանի բոլոր հայաբնակ (բացի Վերի և Վարի Պաղցաղազ գյուղերից) և Մուսելեկ քուրքարնակ գյուղերը<sup>5</sup>:

1939 թ. Ալեքսանդրեսի սանջակը (Անտիոքի կազան), բացառությամբ Քեսաքի շրջանի, միացվում է Թուրքիային, որի հետևանքով շրջանի բնակչության կալվածքների մի մասը, համաձայն նոր սահմանների, հայտնվում է Թուրքիայի կազմում: Թուրքիային է մնում նաև շրջանի կարևորագույն լեռները՝ Կասիոսը և Պալլումը<sup>6</sup>:

1955 թ. Վարի և Վերի Պաղցաղազ գյուղերը միացվում են Քեսաք շրջկենտրոնին<sup>7</sup>:

Շրջանը մինչև Ժմբառ դարի կեսերը գուտ հայաբնակ էր: Բնակչությունը պատկանում էին տարբեր դաշտական առաքելական, ավետարանական (պետականորեն ճանաչվել է 1853 թ.), կարողիկե (պետականորեն ճանաչվել է 1857 թ.), լատին (պետականորեն ճանաչվել է 1890 թ.<sup>8</sup>): Ի դեպ, այս համայնքը 1946 թ. լուծվում է կարողիկե համայնքի մեջ<sup>9</sup>:

1909 թ. ջարդերից, 1915 թ. ցեղասպանությունից և 1947 թ. հայրենադարձուրյունից հետո զգալիորեն նվազում է հայ բնակչության թվաքանակը: 1960-ական թվականներին նրանց փոխարինում են արար ալիխները, որոնք արդեն գրեթե մեկ դար Քեսաքում էին որպես ժամանակավոր աշխատողներ հայ աղաների մոտ: Օգտվելով պետական օրենքից՝ նրանք կարողանում են տիրանալ կալվածքների և դառնում Քեսաքի մշտական բնակչությունը՝ շարունակելով համերաշխարար ապրել հայերի հետ:

Ըստ 1906 թ. մարդահամարի՝ Քեսաքի շրջանն ուներ 1318 տուն գուտ հայ բնակչություն, որից առաքելականները կազմում էին 678 տուն և ունեին 2 դպրոց, ավետարանականները՝ 531 տուն, 11 դպրոց, կարողիկեները՝ 66, լատինները՝ 43 տուն (Վերջին երկուսը միասին՝ 3 դպրոց):

Քեսաք շրջկենտրոնն ուներ 450 տուն առաքելադապան, 320 ավետարանական և 30 կարողիկե հայ բնակչություն: Առաքելականներն ունեին արական 1 դպրոց, իսկ ավետարանականները՝ տարրական 2, միջնակարգ 1 և երկուրդական երկսեռ 2 դպրոցներ:

<sup>5</sup> Ծղաքան Յ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 63:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նշվ. աշխ., հ. Ա, էջ 143:

<sup>8</sup> Նշվ. աշխ., էջ 51:

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 389:

<sup>1</sup> Ծղաքեան Յ., Քեսաք, հ. Գ, Հալէպ, 2004, էջ 61:

<sup>2</sup> Նշվ. աշխ., հ. Ա, Հալէպ, 1995, էջ 45:

<sup>3</sup> Նշվ. աշխ., հ. Գ, էջ 68:

<sup>4</sup> Նշվ. աշխ., հ. Ա, էջ 49:



Քեսար

Գարատուրան գյուղն ուներ 120 առաքելադավան, 48 ավետարանական և 12 տուն կաթողիկե բնակչություն: Յուրաքանչյուր համայնք ուներ մեկական դպրոց:

Սև Աղբյուր գյուղն ուներ 25 առաքելադավան, 21 ավետարանական և 4 տուն կաթողիկե բնակչություն: Գործում էր ավետարականներին պատկանող 1 դպրոց:

Ներքին գյուղն ուներ 17 առաքելադավան, 5 ավետարանական և 8 տուն կաթողիկե բնակչություն:

Չինար գյուղն ուներ 28 առաքելադավան, 10 ավետարանական և 12 տուն կաթողիկե բնակչություն: Գործում էր կաթողիկեներին և լատիններին պատկանող 1 դպրոց:

Զաքալջըր գյուղն ուներ 20 առաքելադավան և 45 տուն ավետարանական բնակչություն: Գործում էր ավետարականներին պատկանող 1 դպրոց:

Քորքյունե գյուղն ուներ 10 առաքելադավան և 28 տուն ավետարանական բնակչություն: Գործում էր ավետարականներին պատկանող 1 դպրոց:

Էրիզուր գյուղն ուներ 50 տուն ավետարանական բնակչություն: Գործում էր 1 դպրոց:

Տյուզաղաջ գյուղն ուներ 6 առաքելադավան և 9 տուն ավետարանական բնակչություն:

Վերի Պաղջաղազ գյուղն ուներ 2 առաքելադավան և 15 տուն ավետարանական բնակչություն: Գործում էր ավետարականներին պատկանող 1 դպրոց:

Վարի Պաղջաղազ գյուղն ուներ 43 տուն լատին բնակչություն: Գործում էր 1 դպրոց<sup>10</sup>:

1909 թ. ապրիլին բալանքում և հրկիզում են Քեսարի հայկական գյուղերը: Տեղի են ունենում ջարդեր<sup>11</sup>: Այս իրողությունը փաստում է նաև 1911 թ. Մովսես Վարդապետ Ոսկերիշյանի կատարած մարդահամարը, որից երևում է, որ շրջանի բնակչության թիվը 1906 թ. համեմատ նվազել է 10.31%-ով:

Համաձայն Վարդապետի կատարած մարդահամարի՝ Քեսար շրջկենտրոնն ուներ 543, Պա-



շորտը՝ 13, Գարատուրանը՝ 237, Սև Աղբյուրը՝ 71, Ներքին գյուղը՝ 33, Չինարը՝ 38, Զաքալջըրը՝ 25, Քորքյունեն՝ 67, Էրիզուրը՝ 59, Տյուզաղաջը՝ 22, Վերի Պաղջաղազը՝ 22 տուն բնակիչ<sup>12</sup>, իսկ Վարի Պաղջաղազը՝ Ենթադրաբար մոտ 52<sup>13</sup> տուն: Հետևաբար 1911 թ. Քեսարի շրջանի ընդհանուր բնակչությունը կազմում էր 1182 տուն:

1911 թ. շրջանում գործում էր առաքելականների 7, ավետարականների 8, կաթողիկեներին և լատիններին պատկանող 4 դպրոցներ: Քեսար շրջկենտրոնում առաքելականներն ունեին երկսեռ 1, ավետարանականները՝ բարձրագույն երկսեռ 1 և իգական 1 դպրոցներ, իսկ կաթողիկեները և լատինները միասին՝ 1 երկսեռ դպրոց:

Գարատուրան գյուղում առաքելականներն ունեին 2, ավետարանականները՝ երկսեռ 1, իսկ կաթողիկեները և լատինները միասին՝ 1 դպրոց:

Սև Աղբյուր գյուղում առաքելականները և ավետարանականներն ունեին մեկական դպրոցներ:

Ներքին գյուղում գործում էր առաքելականներին պատկանող 1 դպրոց:

Չինար գյուղում առաքելականները, կաթողիկեները և լատինները միասին ունեին մեկական դպրոցներ:

Զաքալջըր, Քորքյունե և Էրիզուր գյուղերում գործում էին ավետարանականներին պատկանող մեկական դպրոցներ:

Տյուզաղաջ գյուղում գործում էր առաքելականներին պատկանող 1 դպրոց:

Վերի Պաղջաղազ գյուղում գործում էր ավետարանականներին պատկանող 1 դպրոց:

Վարի Պաղջաղազ գյուղում գործում էր լատիններին պատկանող 1 դպրոց<sup>14</sup>:



12 Նշվ. աշխ., էջ 351, 422, 436, 440, 442, 444-445, 449, 454-455:



13 Մովսես Վարդապետ Ոսկերիշյանը Վարի Պաղջաղազի բնակչությունը դրեւ է Ֆազա-Հասան գյուղի մեջ (Զոլորեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 392), հետևաբար չկա ստույգ տեղեկություն: Գյուղի 1911 թ. տվյալը կազմել ենք՝ իիմբ ընդունելով Վերի Պաղջաղազ գյուղի 1906 և 1911 թթ. բնակչության աճի ընթացքը:


14 Զոլորեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 242, 249, 253, 316, 318, 320-321, 335, 343, 347-348, 351, 361, 370, 378, 382, 391:

<sup>10</sup> «Արևելեան մասնութ», 1906, № 50, էջ 1228-1231:

<sup>11</sup> Զոլորեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 91-94:







Համենատեղը 1906 թ. տվյալների հետ՝ 1909 թ. ա- ղետից հետո աշխուժացել է դպրոցաշինության գործը մանավանդ առաքելաբազան հայերի շրջանում:

1915 թ. Քեսարի բնակչությունը տեղահանվում է և ենթարկվում ցեղասպանության: 1918 թ. հետո հրաշքով փրկվածները սկսում են վերադառնալ հայրենի գյուղ: 1920 թ. Մինոն Այանյանի կողմից կատարված մարդահամարից բացահայտ երևում է, որ շրջանի բնակչության թիվը 1911 թ. համեմատ նվազել է 47.1%-ով:

Ըստ այդ մարդահամարի<sup>15</sup> Քեսար շրջկենտրոնն ուներ 307 տուն բնակիչ, Սև Աղբյուր գյուղը՝ 31, Ներքին գյուղը՝ 17, Զինարը՝ 28, Զարալջըրը՝ 7, Ջորյունեն՝ 29, Էքիզուրքը՝ 35, Տյուզաղազը՝ 6, Վերի Պաղցաղազը՝ 13, Վարի Պաղցաղազը՝ 25 տուն բնակիչ<sup>16</sup>, Գարատուրանը՝ ենթադրաբար

մոտ 120, Պաշորտը՝ 7 տուն բնակիչ<sup>17</sup>: Հետևաբար 1920 թ. Քեսարի շրջանի ընդհանուր բնակչությունը կազմում էր 625 տուն:

1920 թ. շրջանում գործում էր ավետարանական և առաքելական միացյալ 4 դպրոց, իսկ Քեսար շրջկենտրոնում գործում էին արական և իգական միացյալ մեկական, Գարատուրան գյուղում՝ 2 միացյալ դպրոցներ<sup>18</sup>:

Ավելի ուշ՝ 1921 թ., կարողիկե համայնքը սկսում է դպրոցաշինության գործը, իսկ 1924 թ. հետո, եթե առաքելական և ավետարանական համագործակցությունը խսիքանվում է, երկու համայնքներն անջատ են շարունակում այդ գործը:

1947 թ. շրջանի բնակչության մոտավորապես երկու երրորդը փոխարիվում է Խորհրդային Հայաստան: Պաշորտ գյուղն ամբողջովին դատարկվում է<sup>19</sup>: Գյուղերում 1920-1946 թթ. Վերաբարձրաց դպրոցները մեկը մյուսի ետևից սկսում են փակվել:

1955 թ. կատարված մարդահամարից<sup>20</sup> բացահայտ երևում է, որ շրջանի բնակչության թիվը 1920 թ. համեմատ նվազել է 56%-ով:

<sup>15</sup> Մինոն Այանյանը ներկայացրել է 1920 թ. Քեսարում և Քեսարից դրս գտնվող բոյոր բեսարքիների թվաքանակը, որտեղից մենք առանձնացրել ենք 1920 թ. Քեսարում գտնվող բնակչության թիվը:

<sup>16</sup> Չոլարեան Յ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 237-291:

<sup>17</sup> Մինոն Այանյանի 1920 թ. ներկայացրած մարդահամարից պակասում է Գարատուրան և Պաշորտ գյուղերի տվյալները: Ենթադրում ենք, որ վերոհիշյալ գյուղերի մարդահամարն ընդգրկող տետրակը մեզ չի հասել, կամ այլ պատճառներով նարդահամար չի կատարվել (Չոլարեան Յ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 233-234), ինչուապա չկա սույն տեղեկություն: Գյուղերի 1920 թ. տվյալները դուրս ենք երեկ՝ համեմատելով շրջանի այլ գյուղերի բնակչության 1911 թ. նվազման ընթացքի հետ:

<sup>18</sup> Չոլարեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 245, 318-319:

<sup>19</sup> Նշվ. աշխ., էջ 138:

<sup>20</sup> 1955 թ. մարդահամարի տվյալները կազմվել են ըստ շնչագրության: Քանի որ նախկին տվյալները հրատարակվել են ըստ ծխարվերի (ստերի), ուստի 1955 թ. արձանագրված անձերի թիվը բաժանելով 6-ի՝ ստացել ենք գյուղերի ծխարվերը:

Ըստ նոյն թվականի մարդահամարի՝ Քեսար շրջկենտրոնն ուներ 109<sup>21</sup> տուն բնակիչ, Գարատուրանը՝ 67, Սև Աղբյուրը՝ 8, Ներքին գյուղը՝ 11, Չինարը՝ 10, Չաքալզըրը՝ 7, Քորքյունեն՝ 16, Երիզուրը՝ 24, Տյուզաղը՝ 4, Վերի Պաղցաղազը՝ 7, Վարի Պաղցաղազը՝ 12 տուն բնակիչ<sup>22</sup>: Հետեարար 1955 թ. շրջանի ընդհանուր բնակչությունը կազմում էր 275 տուն:

1955 թ. շրջանում գործում էին առաքելադավան հայերին պատկանող 3, ավետարականների 6, կարողիկեների 3 դպրոցներ:

Քեսար շրջկենտրոնն ուներ ավետարականների 2, առաքելականներին և կաթողիկեներին պատկանող մեկական դպրոցներ:

Գարատուրան գյուղում առաքելականներն ունեին 2, իսկ ավետարականները և կաթողիկեները՝ մեկական դպրոցներ:

Քորքյուններ, Էրիզուրը և Վերի Պաղցաղազ գյուղերում գործում էին ավետարանականներին պատկանող մեկական դպրոցներ, իսկ Վարի Պաղցաղազ գյուղում՝ լատիններին պատկանող 1 դպրոց<sup>23</sup>:

1960-ական թվականներին բնակչության մի մասն արտազարում է Լիբանան, այնտեղից էլ՝ ԱՄՆ, ավելի ոչ՝ Արարական Միացիալ Էմիրություններ: Նոյն թվականներին պետական նոր մի օրենքից օգտվելով՝ ալիք արաբները տիրանում են կալվածքներին և մշտական բնակություն հաստատում Քեսարում:

1970-ականներին, բարեբախտաբար, արտազարքը նվազում է՝ պայմանափորված հավեպահայության համար Քեսարն ամառանոցի և զբուժքության կենտրոնի վերածվելու հանգամանքով:

1990-2000 թթ. շրջանը դառնում է Սիրիայի առաջնակարգ զբուժքության կենտրոն, այդ իսկ պատճառով Ի դարի ընթացքում առաջին անգամ շրջանում արձանագրվում է բնակչության աճ:

2006 թ. շրջան կատարած մեր այցության ժամանակ ըստ տների հավաքված տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը.

	Հայեր	Ալիմներ	Քրդեր
Քեսար շրջկ.	88	3	
Գարատուրան	45		
Գարատաշ	25		
Էրիզուրը	34		
Ներքին գյուղ	32		
Չինար	18	30	
Չաքալզըր	17		
Սև Աղբյուր	17	15	
Վարի Պաղցաղազ	13	27	
Վերի Պաղցաղազ	7	1	

<sup>21</sup> Զոլաքեան Յ., Աշխ., հ. Ա, էջ 138: Քեսարի շրջանի բնակչության տվյալները դուրս ենք քերել շրջանի բնակչության բնդիմության թվից հանելով բոլոր գյուղերի բնակչության թվերը:

<sup>22</sup> Զոլաքեան Յ., Աշխ., հ. Ա, էջ 281, 334, 340, 347, 351, 358, 366, 377, 381, 390:

<sup>23</sup> Նշվ. աշխ., էջ 239, 247, 252, 255, 315, 319-320, 322, 361, 372, 383, 391:




Էրիզուրը, Գարատուրան և Քորքյունե գյուղերը

Տյուզաղազ	19	3	2
Քորքյունե	13	10	
Հնդամենը	328	89	2

Հայերն ըստ դավանանքի բաշխված էին հետևյալ կերպ. առաքելադավաններ՝ 212, կաթողիկեներ՝ 71, ավետարանականներ՝ 45 տուն:

Շրջկենտրոնում գործում էր առաքելադավանների 1 դպրոց՝ 250 հայ և 20 ալիք աշակերտներով: Ավետարանականներն ունեին 1 դպրոց՝ 45 հայ և 15 ալիք, կաթողիկեները՝ և 1 դպրոց՝ 40 հայ և 20 ալիք աշակերտներով և 1 պետական դպրոց<sup>24</sup>:

<sup>24</sup> 2006 թ. տվյալները մեզ փոխանցելու համար պարտական ենք այժմ հանգույցյալ էրիզուրցի Արարակ Աշոքյանին և տիկնոցը՝ Խարուն Աշոքյանին, որոնք բոլոր գյուղերի բնակիչներին հիշում էին ամուն առ ամուն:




## ՀՃՈՒ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2011 թ. տարեսկզբին ՀՃՈՒ հիմնադրամը ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ լույս ընծայեց «ՀՃՈՒ. գիտական ուսումնասիրություններ» շարքի ԺԴ հատորը՝ «Հուշագրական ժառանգություն» վերնագրով:

Հատորը ներառում է գլխավորապես Արևմտյան Հայաստանից սերող 19 հեղինակների՝ ցարդ անտիպ հուշագրությունները, որոնք առատ և բազմաբնույթ նյութեր են պարունակում Հայոց Հայրենիքի և Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության զանազան անցքերի վերաբերյալ:

## ԸՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Արմեն Քյուրքչյանի և Հրայր-Բագե Խաչերյանի համահեղինակությամբ լույս է ընծայվել նյութի աննախադեպ հարուստ և համակարգված մատուցմամբ «Հայկական զարդարվեստ» խորագիրը կրող ծավալուն աշխատությունը, որը լուրջ ներդրում է հայ արվեստի և մշակույթի ուսումնասիրության գործը խորացնելու ոլորտում:



Արմեն Մուրաֆյանին և Պատրիկ Տոննապետյանին Հայաստանի 12 մայրաքաղաքներին նվիրված համահեղինակությամբ լույս ընծայված աշխատության (Les douze capitales d'Arménie, Paris, 2010) առքիվ:

Ծնորհակալություն ենք հայտնում Մարսելի Հայ մշակույթի տաճ հանձնախմբին՝ ի դեմս Ժիրայր Ծավճյանին՝ աշխատության 1 օրինակ ՀՃՈՒ գրադարանին նվիրաբերելու համար:

ՀՀԳԱԱ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտ. դղկտոր Մուրադ Հասրարյանին «Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը» եռալեզու աշխատության լույլնեցայնան (Մոսկվա, 2010 թ.) առքիվ: Մեծարիվ չափագրություններով և լուսանկարներով հագեցած ուսումնասիրությունն ակնառու ավանդ է հայ ճարտարապետության պատմության և տեսական խնդիրների լուսաբանման ոլորտում:

